«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՌԵԿՏՈՐ՝ Ռ. ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ.....2

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....3

1.1.ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....5

1.2.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....9

1.3.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....15

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....19

3. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ.....29

3.1.ԿՐԹԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ.....29

3.2.ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ.....30

3.3. ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԳՐԱՊԱՇԱՐ.....31

4. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....36

5. ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ.....48

6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ.....50

6.1.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ.....50

6.1.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....56

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ.....60

8. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ 71

8.1.ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ.....71

8.2.ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՔՈԼԵՋ.....73

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԽՈՍՔ

Հայաստանի Հանրապետության ներկա հանրային-տնտեսական զարգացման իրավիճակում նոր մարտահրավերներ են առաջացել տնտեսության բացառապես բոլոր ոլորտներում: Կարևորագույններից մեկը կրթության ոլորտն է՝ իր առջև դրված խնդիրներով և զարգացման գործընթացի մեջ ներգրավված լինելու անհրաժեշտությամբ:

Հովհ. Թումանյանի անվան Վանաձորի պետական համալսարանը, ավելի քան կեսդարյա ուսումնամանկավարժական և գիտահետազոտական գործունեության լավագույն փորձն ընդունելով որպես հենք, ուղղակիորեն արձագանքելով ժամանակի մարտահրավերներին, ստանձնում է համակարգաստեղծ դերակատարություն՝ ստեղծելով ուսումնական, կրթական, գիտական և նորարարական համակարգ:

Համալսարանի գործունեության նպատակն է ներքին և արտաքին շահակիցների կարիքների բավարարմանն ուղղված մատուցվող ծառայությունների կազմակերպումը՝ դիմակայելով 21-րդ դարի մարտահրավերներին, հնարավորություն տալով ուսանողներին՝ ստանալու բարձրորակ կրթություն, իսկ գործատուներին՝ ունենալու որակյալ մասնագետներ:

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2020 թ. դեկտեմբերին աշխատանքային խմբի կողմից մշակվել և Հոգաբարձուների խորհրդի քննարկմանն է ներկայացվել ««Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական պետական» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարությունը» և ««Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021-2025 թթ. ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը», որոնք, Հոգաբարձուների խորհրդի աշխատանքների կազմակերպման հետ կապված, հաստատվել են 2021թվականի հուլիսի 15-ին կայացած նիստում:

Մինչ այդ Համալսարանի կառավարման և գործունեության կազմակերպման հիմք է համարվել է ռեկտորի «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի զարգացման ռազմավարությունը»:

Համալսարանի գիտական, կրթական, վարչական գործընթացների կառավարման համար շատ կարևոր է ներքին իրավական դաշտի կարգավորումը: Ժամանակը, նաև ՀՀ օրենսդրական դաշտի, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ստեղծած կարգերի և կանոնակարգերի փոփոխությունները թելադրում են թե՛ նոր կարգերի ստեղծում, թե՛ գոյություն ունեցող կարգերի փոփոխություն: Կառավարման գործընթացը հստակ, ճկուն և ոչ ռիսկային է լինում միայն ներքին իրավական դաշտի ճշգրտությամբ:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021 Սեպտեմբերի 8-ի թիվ 1448–Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության» 27-րդ և 30-րդ կետերում: Փոփոխությունը վերաբերել է հոգաբարձուների խորհրդի կազմին:

Համալսարանում 2021 թվականին կատարվել է 25 կարգի, կանոնակարգի փոփոխություն կամ նոր հասատատում:

Փոփոխվել են՝

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի կանոնակարգը
2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ներքին կարգապահական կանոնները
3. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական տեղեկագրի հրատարակման կանոնակարգը
4. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողական նպաստների, պետական և անվանական կրթաթոշակների տրամադրման կարգը
5. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգը

6. Կրթական ծրագրերում ընդգրկված կամընտրական դասընթացների ընտրության կարգը
7. Հետազոտողի պատրաստման կրթական ծրագրով ասպիրանտուրայի ընդունելության, հայցորդության ձևակերպման ընթացակարգը
8. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգը
9. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի՝ ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կանոնակարգը
10. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի քոլեջի (միջին մասնագիտական ուսումնական հաստատության) կանոնադրությունը
11. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի կանոնակարգը

Նոր հաստատված կարգերն են՝

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի աշխատողներին գիտակազմակերպական, ուսումնամեթոդական և մարզամշակութային որոշ տեսակի աշխատանքների համար դրամական խրախուսման հաշվարկման և վճարման կարգը
2. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Մագիստրոս» ժողովածուի հրատարակման կանոնակարգը
3. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդին կից մշտական ուսումնամեթոդական հանձնաժողովի կարգը
4. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման կանոնակարգը
5. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամում նորարարական մեթոդներով դասավանդման և տեսաձայնագրված դասի «գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման, անցկացման կարգը
6. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգի 2021-2022 ուսումնական տարվա ընդունելության կարգը
7. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի մագիստրատուրայի հեռակա ուսուցման համակարգում 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգը

8. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Կրթական գործընթացների կառավարման բաժնի կանոնակարգը
9. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Գիտահետազոտական աշխատանքների, նորարարությունների և համագործակցության բաժնի կանոնադրությունը
10. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ընդհանուր բաժնի կանոնակարգը
11. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի կանոնակարգը
12. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Բնական գիտություննեի ֆակուլտետի կանոնադրությունը
13. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հասարակական գիտությունների ֆակուլտետի կանոնադրությունը
14. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կանոնադրությունը
15. *«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Ուսանողական խորհրդի կանոնադրությունը (հաստատվել է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից)*

1.1. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Կառավարման գործընթացներում խիստ կարևոր են մարդկային ռեսուրսների գնահատումը և ռիսկերի վտանգավորության աստիճանի որոշումը. դրանց կանխարգելմանը կամ թուլացմանը ուղղված հստակ գործողությունների և քայլերի առաջնահերթության որոշումը: Մենք խնդիր ունենք և՛ արտաքին (այլ մրցունակ բուհերի առկայություն, հասարակական վերաբերմունքի փոփոխություն), և՛ ներքին ռիսկերի (կրթական ծառայությունների որակի նվազում, աշխատաշուկայի պահանջների բավարարման, մակարդակի, ուսանողների թվաքանակի կրճատում, աշխատողների ցածր աշխատավարձ) առմամբ. մյուս ռիսկերը ևս նվազ չափով առկա են (ֆինանսական միջոցների ոչ արդյունավետ օգտագործում):

Մարդկային ռեսուրսների կառավարումը տարբեր մակարդակներում (ֆակուլտետ, ամբիոն, ստորաբաժանում) հիմնականում ուղղվել է ռիսկերի թուլացմանը:

Մարդկային ռեսուրսների և ֆինանսական միջոցների կառավարման համար առաջնահերթային է ուսումնական պլաններից բխող ժամաքանակի ճիշտ հաշվարկը:

Ժամաքանակն անմիջականորեն պայմանավորված է ակադեմիական խմբերի և ենթախմբերի թվով, իսկ վերջինս՝ ուսանողների թվով: Աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրությունը, ստորաբաժանումներից մասնագիտական կրթական ծրագրերի ընդունելության հայտարարության առաջարկները

(մասնագիտական ամբիոնի պահպանման առաջնահերթության կարևորմամբ) բերում են բարդ իրավիճակի, և ռիսկերն ավելի մեծ են լինում:

2021թ. ընդունելության քննությունների արդյունքում տեղի է ունեցել ամբիոնների ժամաքանակների փոփոխություն: Կատարվել է ժամաքանակի փոփոխված մասի ճշգրտում, ինչպես նաև ընդունելության արդյունքում ճշտվել է խմբաքանակը: Ժամաքանակի ճշգրտումը հաստիքների թվաքանակի կառավարման հնարավորություն է տվել: Կազմվել են ամբիոնների տրամադրած ժամաքանակի և բեռնվածքի չափորոշիչները, որոնց հիման վրա հաստատվել են դասախոսների բեռնվածքները: Պրոֆեսորադասախոսական կազմի բեռնվածքի կազմումը հնարավորություն է տվել իրականացնել հաստիքների թվաքանակի կառավարում:

Դասախոսական համակազմը ավանդաբար ձևավորվում է երկու ճանապարհով՝ մրցութային և տվյալ ուսումնական տարվա համար հրավիրված. այս դեպքում ունենում ենք ժամավճարային կարգով աշխատողներ.

Աղյուսակ 1.Դասախոսական կազմի բաշխումն ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի (հիմնական և համատեղություն, ժամավճար)

Չափանիշ	2017թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.
Հիմնական և համատեղություն	217	199	198	207	153
Ժամավճար	33	41	37	35	73
Ընդամենը՝	**250**	**240.0**	**235.0**	**242.0**	**226**

2021-2022 ուսումնական տարվա համար բաշխվել է 148 740 ժամ, որից 84 668-ը՝ լսարանային:

2021թ.-ին հայտարարվել է 39 հաստիքի մրցույթ, տեղակալվել է 33.25-ը, 5.75 հաստիքի համար ներկայացված դիմումները մերժվել են մրցույթին մասնակցելու անհամապատասխանության պատճառով: Նույն թվականին հայտարարվել է 7 հաստիքի մրցույթ ամբիոնի վարիչի և 3 հաստիքի մրցույթ դեկանի պաշտոնի համար:

Աղյուսակ 2. Դասախոսի միջին լսարանային ծանրաբեռնվածությունը

Պաշտոնի անվանումը	2017թ.		2018 թ.		2019 թ.		2020 թ.	2021 թ.
Պրոֆեսոր	256	320	256	320	256	288	Լսարանային ծանրաբեռնվածություն առանձնացված չէ	224
Դոցենտ	448	512	448	512	416	480		448
Ասիստենտ	576	640	576	640	544	608		544
Դասախոս	640	704	640	704	608	672		640

Աղյուսակ 3. Դասախոսի միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը /ակադեմիական ժամ/

Պաշտոնի անվանումը	2017թ.		2018 թ.		2019 թ.		2020 թ	2021 թ.
Պրոֆեսոր	8	10	8	10	8	10	Լարվածային ծանրաբեռնվածություն առանձնացված չէ	7
Դոցենտ	14	16	14	16	14	16		14
Ասիստենտ	18	20	18	20	18	20		17
Դասախոս	20	22	20	22	20	22		20

2021 թվականին համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատված պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչներով դասավանդողների լսարանային բեռնվածությունը հնարավորինս նվազել է (պրոֆեսոր, ասիստենտ) կամ կիրառվել է նվազագույն շեմը (դոցենտ, ասիստենտ): Առանձնակի ուշադրություն է դարձվել դասապատրաստմանը և խորհրդատվական աշխատանքներին:

Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ, վարչական, վարչատնտեսական կազմ հարաբերակցության խնդիրը ցանկացած բուհի համար կարևոր է: Դեռևս 2003թ. կատարված հետազոտության հավելվածում (խոսքը ՀՀ բարձրագույն կրթության բարեփոխումների ռազմավարության մասին է) նշվում է վտանգների մասին (Տե՛ս «Բարձրագույն կրթություն», 1-ին հատոր) մեր կողմից կատարված ուսումնասիրություններից բխում է, որ դասավանդող և չդասավանդող հարաբերակցությունը պետք է լինի խիստ հավասարակշռված և մոտ իրատեսականին ռիսկային չլինելու համար:

2020-2021թթ. ունեցել ենք հետևյալ իրավիճակը.

Աղյուսակ 4.Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ, վարչական, վարչատնտեսական կազմ հարաբերակցությունը.

Չափանիշ	2016-17	2017-18	2018-19	2019-20	2020-21
Դասախոսական կազմ	250	240	235	242	221
Ուսումնաօժանդակ, վարչական և վարչատնտեսական կազմ	190	188	185	181	100
Դասախոսական կազմ-ուսումնաօժանդակ, վարչական, վարչատնտեսական կազմ հարաբերակցությունը	**1.3**	**1.28**	**1.27**	**1.34**	**2.21**

Հարաբերակցության դրական տեղաշարժը պայմանավորված է ուսումնաօժանդակ, վարչական և վարչատնտեսական կազմի թվաքանակի նվազմամբ:

ՎՊՀ հոգաբարձուների խորհրդի 2021 հուլիսի 23-ին նիստում առաջարկվել և իրականացվել է որոշ հաստիքների փոփոխություն: Մասնավորապես.

1. **ՎՊՀ բուհական համակարգ.**

Առաջարկվում է ավելացնել հետևյալ հաստիքները.

- Մասնագետ – 1,0 դրույք (կապահովի «Կրթական գործընթացների կառավարման բաժին»-ի գործառույթների էֆեկտիվ կազմակերպումը)
- Հավաքարար – 7,0 դրույք (նախկինում կազմակերպվել է քաղիրավական պայմանագրի միջոցով),
- Պահակ – 4,0 դրույք (նախկինում կազմակերպվել է քաղիրավական պայմանագրի միջոցով),
- Օպերատոր՝ կաթսայատան – 5,0 դրույք (նախկինում կազմակերպվել է քաղիրավական պայմանագրի միջոցով),

Ծառայողական անհրաժեշտության բացակայության պատճառով առաջարկվում է կրճատել հետևյալ թափուր հաստիքները.

- Ռեկտորի օգնական՝ աշխատակազմի ղեկավար – 1,0 դրույք,
- Վարորդ – 1,5 դրույք,
- Ավագ մեթոդիստ – 1,0 դրույք,
- Լաբորանտ – 1,0 դրույք,
- Գործավար – 2,0 դրույք,
- Թարգմանիչ (ռուսաց և անգլերեն լեզուների) – 1,0 դրույք (կիրականացվի քաղիրավական պայմանագրի միջոցով կամ աութսորսինգային ընկերության ներգրավմամբ)։

2. **ՎՊՀ քոլեջ.**

- Մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման կենտրոնի մասնագետ – 1,0 դրույք (պահպանվել է, բայց վերանվանվել է «Խորհրդատու՝ մասնագիտական կողմնորոշման»),
- Պահակ – 0,75 դրույք (կրճատվել է ծառայողական անհրաժեշտության բացակայության պատճառով)։
- Ավագ մեթոդիստ – 0,5 դրույք (ավելացում),
- Խորհրդատու՝ արտադրական փորձուսուցման – 0,75 դրույք(ավելացում),
- Հաշվապահ – 0,5 դրույք (ավելացում),
- Մենեջեր՝ կադրերի կառավարման – 0,5 դրույք (ավելացում),
- Մասնագետ՝ ընդհանուր բաժնի – 0,5 դրույք (ավելացում),
- Հավաքարար – 1,0 դրույք (ավելացում),։

ՎՊՀ քոլեջի հաստիքացուցակի առաջարկվող փոփոխությունների արդյունքում առկա 3,25 դրույքը փոխարինվել է 6,25 դրույքով։

3. **ՎՊՀ Հենակետային վարժարան.**

- Պահակ – 0,75 դրույքը դարձնել 3,0 դրույք (անհրաժեշտություն է առաջացել ունենալ գիշերային պահակներ),
- Օպերատոր՝ կաթսայատան – 2,0 դրույք, հաստիքները նոր են (փոփոխությունը պայմանավորված է մասնաշենքի առանձնացված կաթսայատան սպասարկման հանգամանքով),
- Բուժքույր – 0,5 դրույքը դարձել է 1,0 դրույք (նախկինում վարժարանի սովորողները և աշխատակիցներն օգտվել են համալսարանի բուժկետից, այժմ՝ առանձին մասնաշենքում, անհրաժեշտություն է առաջացել ունենալ բուժքույր 1 լրիվ հաստիքով),
- Օպերատոր՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների – 0,5 դրույքը դարձնել 1,0 դրույք (կապահովի կրթական գործընթացների էֆեկտիվ կազմակերպումը),
- Մենեջեր՝ կադրերի կառավարման – 0,5 դրույք, հաստիքը նոր է (վարժարանն ունի ավելի քան 40 աշխատակից և անհրաժեշտություն է առաջացել համալսարանի ՄՌԿ բաժնում ունենալու առանձին մասնագետ, որն անմիջականորեն կզբաղվի վարժարանի գործընթացներով),
- Մասնագետ՝ ընդհանուր բաժնի – 0,5 դրույք, հաստիքը նոր է (կապահովի վարժարանի գործառույթների իրականացման փաստաթղթաշրջանառությունը)։
- Լաբորանտի 1,0 դրույքը կրճատվել է ծառայողական անհրաժեշտության բացակայության պատճառով։

Փոփոխությունը հիմնականում պայմանավորված է վարժարանը նոր մասնաշենք տեղափոխելու հանգամանքով։ ՎՊՀ հենակետային վարժարանի հաստիքացուցակի առաջարկվող փոփոխությունների արդյունքում առկա 14,25 դրույքը փոխարինվել է 19,5 դրույքով։

ՎՊՀ հաստիքացուցակի առաջարկվող փոփոխությունների արդյունքում առկա 107 դրույքը փոխարինվել է 116,5 դրույքով։

1.2. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2021 թվականին Վանաձորի պետական համալսարանի համախառն բյուջեի մուտքերը կազմել են 876 մլն 364 հազար 800 դրամ, այն եկամուտների մասով գերակատարվել է 0.02 տոկոսով։ Ստորև ներկայացվում են 2017- 2021թթ. ՎՊՀ համախառն բյուջեները (*նկար 1*)՝



Նկար 1՝ 2017-2021թթ ՎՊՀ համախառն բյուջե

2021 թվականին Վանաձորի պետական համալսարանի համախառն բյուջեի եկամուտները գոյացել են՝

- վճարովի ուսուցման ծառայություններից՝ 59.8 %,
- պետական բյուջեի ֆինանսավորումից՝ 20.6 %,
- հենակետային վարժարանի համար պետբյուջեի ֆինանսավորումից՝ 12.6 %,
- քոլեջի վճարովի և անվճար համակարգերի ուսուցումից՝ 5,7 %,
- վերապատրաստման դասընթացներից՝ 0,7 %,
- այլ մուտքերից՝ 0,6 % (*տես նկար 2*):



Նկար 2. 2021թ-ի թվականի եկամուտներ

2021թ-ին ՎՊՀ հիմնադրամի աշխատավարձը կազմել է բյուջեի 75.3 տոկոսը: Համալսարանի աշխատակիցներին 2021թ.-ին վճարվել է 0.8; հենակետային վարժարանին՝ 1; իսկ քոլեջին՝ 1.3 լրավճար:

Աշխատավարձի (ներառյալ աշխատավարձ ու դրան հավասարեցված միջոցներ) ծավալը 2017-2021թթ-ին համախառն բյուջեի համեմատ կազմել է՝



Նկար 3. Աշխատավարձի (ներառյալ աշխատավարձ ու դրան հավասարեցված միջոցներ) ծավալը 2017-2021 թթ.

2021 թվականին վերանայվել են ՎՊՀ պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմերի հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը, որի հետևանքով էականորեն փոփոխվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմ/վարչական անձնակազմ աշխատավարձերի ֆոնդերի հարաբերակցությունները:

2021 թվականի հունվարից օգոստոսն ընկած ժամանակահատվածում պրոֆեսորադասախոսական անձնակազմը վարձատրվել է հետևյալ պաշտոնային դրույքաչափերով՝

Աղյուսակ 5. 2021 թ-ի հունվար-օգոստոս ամիսների ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնային դրույքաչափերը

հ/հ	Պաշտոնի անվանումը	Պաշտոնային դրույքաչափ (դրամ)	ժամավճար
1.	Պրոֆեսոր	310 000	5314
2.	Դոցենտ	250 000	3750
3.	Ասիստենտ	190 000	2682
4.	Դասախոս	130 000	1733

Պրոֆեսորադասախոսական անձնակազմին, կախված բուհում աշխատանքային ստաժից, վճարվում են նաև հավելավճարներ՝

Աղյուսակ 6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմին աշխատանքային ստաժի համար տրվող հավելավճարի չափ

Չափանիշ	*Մինչև 10 տարի*	*Մինչև 15 տարի*	*15-ից բարձր*
Գիտությունների դոկտոր և/կամ պրոֆեսոր	5000	10000	15000
Գիտությունների թեկնածու և/կամ դոցենտ	2000	3000	4000
Գիտական աստիճան չունեցող	1000	2000	3000

Սպորտի վաստակավոր մարզիչների աշխատավարձին հավելվում է ամենամսյա հավելավճար՝ աշխատավարձի 15 տոկոսի չափով, իսկ արվեստի վաստակավոր գործիչների աշխատավարձին՝ ամենամսյա հավելավճար 4000 դրամի չափով:

2021 թվականի հունիսի 8-ին Գիտխորհրդի կողմից հաստատվել է պրոֆեսորադասախոսական անձնակազմի տարեկան ուսումնական բեռնվածության չափորոշիչների որոշման նոր կանոնակարգ, որից ելնելով՝ փոփոխության են ենթարկվել պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնային դրույքաչափերը: Այն ներկայացված է ստորև՝

Աղյուսակ 7. 2021 թվականի *սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի պաշտոնային դրույքաչափերը.*

հ/հ	*Պաշտոն*	*Պաշտոնային դրույքաչափ*	*Ժամավճար ներքին*	*Ժամավճար հրավիրված*
1	Պրոֆեսոր	225 000	3 857	2 700
2	Դոցենտ	185 000	2 467	1 727
3	Ասիստնետ	145 000	1 832	1 282
4	Դասախոս	120 000	1 440	1 008

2021թ-ի սեպտեմբերին ՎՊՀ պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների գիտական աստիճանների համար սահմանվել և ներդրվել են հետևյալ հավելավճարները՝

Աղյուսակ 8. 2021 թ-ի սեպտեմբեր 1-ից սկսած պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների գիտական աստիճանների հավելավճարները

Կոչում	*Հավելում*
Դոկտոր-պրոֆեսոր	15000
Դոկտոր	9000

Պրոֆեսոր	6000
Գիտությունների թեկնածու-դոցենտ	10000
Գիտությունների թեկնածու	6000
Դոցենտ	4000

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի 2021թ-ի աշխատավարձի ֆոնդը կազմում է 70.7 տոկոս, իսկ վարչական անձնակազմինը՝ 29.3 տոկոս, նախորդ տարի հարաբերակցությունը եղել է՝ 64.2 և 35.8 տոկոս:



Նկար 4. 2017-2021թթ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմ/վարչական անձնակազմ աշխատավարձերի ֆոնդերի հարաբերակցությունները

Աղյուսակ 9.2017-2021թթ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմ/վարչական անձնակազմ աշխատավարձերի ֆոնդերի հարաբերակցությունները՝ գումարային

Չափանիշ	2017		2018		2019		2020		2021	
	դրամ	տոկոս	դրամ	տոկոս	դրամ	տոկոս	դրամ	տոկոս	դրամ	տոկոս
Դասախոսական և վարչական աշխատակիցների ընդհանուր աշխատավարձ	620,558.60	100	591,384.10	100	551,603.60	100	542,277.00	100	547,434.45	100

Դասախոսական անձնակազմի աշխատավարձ	388,703.90	62.6	362,343.20	61.3	347,466.80	63	347,946.30	64.2	387,171.25	70.7
Վարչական անձնակազմի աշխատավարձ	231,854.70	37.4	229,040.90	38.7	204,136.80	37	194,330.70	35.8	160,263.20	29.3

2021թ-ի ՎՊՀ հիմնադրամի աշխատավարձի վերլուծությունն ըստ ստորաբաժանումների ունի հետևյալ տեսքը՝



Նկար 5. 2021թ-ի ՎՊՀ հիմնադրամի աշխատավարձի վերլուծությունն՝ ըստ ստորաբաժանումների

2021 թվականին կրթական միջավայրի զարգացման համար կատարված ծախսերի ծավալը կազմում է 36 մլն 613 հազար 500 ՀՀ դրամ, 2020 թ-ին կազմել է՝ 16 մլն 236 հազար դրամ: 2020-2021թթ զարգացման համար կատարված ծախսերն ըստ հոդվածների ներկայացված է նկար 6-ում:



Նկար 6. 2020-2021 թթ զարգացման համար կատարված ծախսերն ըստ հոդվածների

2021 թվականի իրականացվել է համալսարանի 2020թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ:

Ֆինանսական հաշվետվությունները տեղադրվում են Համալսարանի կայքում:

Կրթական գործընթացների բաժնի հետ համատեղ իրականացվել է համալսարանում առկա մասնագիտությունների ինքնարժեքի նախնական հաշվարկման գործընթաց:

1.3.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2021 թվականին բարելավման որոշակի աշխատանքներ են կատարվել շենքերի պահպանման, տարածքի առավել ճիշտ օգտագործման, կարողությունների առավել նպատակահարմար օգտագործման համար:

Աղյուսակ 10. 2021 թվականին կատարված աշխատանքները

h/h	Աշխատանքների անվանումը	Կատարման ժամկետները	Աշխատանքների իրականացումը
1.	Համալսարանի ուսումնական թիվ 1 մասնաշենքի նկուղային հարկում արխիվին հատկացված տարածքի շինվերանորոգում	Հունվար-փետրվար	Գնումներ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
2.	ՀՀՔՏՀԱՏՄ-ի կողմից ներկայացված կարգադրագրի 6-րդ կետի՝ արտաքին հրշեջ սանդուղքի պատրաստում և տեղադրում	Հունվար	Գնումներ, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
3.	Ջեռուցման համակարգի վթարավերականգնողական աշխատանքներ	Փետրվար	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
4.	՝ՎՊՀ գիտական տեղեկագրի՝խմբագրական խորհրդին հատկացված սենյակի վերանորոգում և գրասենյակային, համակարգչային (համակարգիչներ, տպող սարք) գույքով, հեռախոսով, համացանցով, ներքին ցանցով համալրում	Փետրվար	Համալսարանի վարչատնտեսական և SS բաժնի աշխատակիցների միջոցով
5.	ՀՀՔՏՀԱՏՄ-ի կողմից ներկայացված կարգադրագրի 2-րդ կետի՝ «Հրդեհ ազդարարող ինքնաշխատ համակարգի վերանորոգման և համալսարանի բոլոր շինություններում հրդեհ ազդարարման ինքնաշխատ համակարգի մոնտաժման» համապատասխան հրդեհ ազդարարման սարքերի տեղադրման, մոնտաժային աշխատանքներ	Մարտ-դեկտեմբեր	Կապալառու կազմակերպություն
6.	ՀՀՔՏՀԱՏՄ-ի կողմից ներկայացված կարգադրագրի 9-րդ կետի՝ «Գրապահոցներում գտնվող լուսատուների և գրքերի միջև 0,5 մետր հեռավորություն պահպանելու» վերաբերյալ, աշխատանքներ	Մարտ	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով

	իրականացնելու համար էլեկտրամոնտաժային աշխատանքներ		
7.	Սանհանգույցների ջրթափ բաքերի փոխարինում	Մարտ	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով
8.	Համակարգչային լսարանների կահավորում /202.203/	Մարտ	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով
9.	«Բազում» ուսումնամարզական հանգրվանի տարածքում պտղատու այգու վերականգնման և մշակման աշխատանքներ	Ապրիլ	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
10.	Ապրիլի 6-ի գիշերային քամիների հետևանքով վնասված ուսումնական թիվ 2 մասնաշենքի տանիքի պոկված թիթեղների ամրացում	Ապրիլ	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
11.	Նոր էլեկտրոնային զանգ հավաքելու, ծրագրավորելու և տեղադրելու	Մայիս	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
12.	Վարժարանի մասնաշենքի մնացյալ պատուհանների փոխում մետաղոպլաստե պատուհաններով	Օգոստոս-սեպտեմբեր	Կապալառու կազմակերպություն
13.	Ուսումնական թիվ 2 մասնաշենքի մուտքերի դռների փոխարինում նորերով՝ դեպի դուրս բացվի	Օգոստոս-սեպտեմբեր	Կապալառու կազմակերպություն
14.	Ուսումնական թիվ 2 մասնաշենքի ապամոնտաժված մուտքերի դռների տեղադրում ՎՊՀ քոլեջի և ֆիզիկայի լաբորատորիայի քարե բացվածքնրում՝ որպես կառուցված պահոցների դռներ	Սեպտեմբեր	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով,
15.	Համալսարանի ուսումնական թիվ 1 մասնաշենքի նկուղային հարկում ջեռուցման խողովակները նորոգելու և զոդելու	Սեպտեմբեր	Քաղիրավական պայմանագիր
16.	Համալսարանի թիվ 1 ուսումնական մասնաշենքի 1-ին հարկի ճեմասրահի ձևավորում, ներկարարական կոսմետիկ հարդարում, ստենդի պատրաստում և 4-րդ հարկի հանդիսությունների դահլիճի վարագույրների կրող դետալների ամրացում, ձևավորում	Սեպտեմբեր	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով, ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
17.	Համակարգչային լսարանների նորոգում, համակարգչային սեղանների ձևափոխում, կահավորում /208.301/	Սեպտեմբեր	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով
18.	Համալսարանի վարչական մասնաշենքի 1-ին հարկի աշխատասենյակների, պատմության ամբիոնի, հասարակական գիտությունների ֆակուլտետի դեկանատի, գրադարանի որոշակի հատվածի մասնակի վերանորոգում	Սեպտեմբեր-հոկտեմբեր	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով,

19.	ՎՊՀ հենակետային վարժարանի ջեռուցման համակարգի վերանորոգում	Հոկտեմբեր	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
20.	ՎՊՀ վարչական մասնաշենքի աշխատասենյակների հատակների վերանորոգում՝ մասնակի փոխելով և ամրացնելով, մանրահատակի հղկում և լաքապատում	Նոյեմբեր	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
21.	Կաթսայատան և ջեռուցման համակարգերի ձմռան նախապատրաստական աշխատանքներ	Նոյեմբեր	ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր
22.	ՎՊՀ հիմնադրամի ուսանողական խորհրդի սենյակի փափուկ կահույքի վերանորոգում	Նոյեմբեր	Քաղիրավական պայմանագիր
23.	Վարժարանի ցանկապատի և դարպասների կառուցում դեկորատիվ նկարով /ՊՐԻՆՏԵԿ/ մետաղական թիթեղով	Դեկտեմբեր	Կապալառու կազմակերպություն
24.	Ս.Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնի վերանորոգման առանձնացված աշխատանքներ (ըստ ՀՀՔՏՀԱՏՄ-ի կողմից ներկայացված կարգադրագրի). առաստաղների ջերմամեկուսացում, ԱՐՄՄԹՈՆԳ նյութով կառուցում	Դեկտեմբեր	Կապալառու կազմակերպություն
25.	Հեռախոսների ներքին ցանցի վերանորոգում և սպասարկում, էլեկտրական գծերի. մալուխների կարգաբերում, վերանորոգում, մետաղապլաստե դուռ-լուսամուտների կարգաբերում սանտեխնիկայի և սարքավորումների ընթացիկ նորոգում, գազաեռակցման և էլեկտրաեռակցման աշխատանքներ, հակահրդեհային միջոցառումների իրականացում	Ամբողջ տարվա ընթացքում	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով
26.	Հակահամաճարակային միջոցառումների իրականացում անցակետում, բոլոր մասնաշենքերում և բակային տարածքներում, իրավիճակի վերաբերյալ իրականացված դիտարկումների արդյունքների ամենօրյա զեկուցում	Ամբողջ տարին	Համալսարանի վարչատնտեսական բաժնի աշխատակիցների միջոցով

2021 թվականի հունվարից գործարկվել է տպիչների քարթրիջների լիցքավորման հաստոցը, որը հնարավորություն է տվել քարթրիջը լիցքավորել համալսարանի ներսում՝ ապահովելով քարթրիջների լիցքավորման և տպիչների սպասարկման արդյունավետ արագությունը և նախկինում լիցքավորված քարթրիջների վրա ծախսվող ռեսուրսների գրեթե 40 տոկոս խնայողություն:

Համալսարանում ներդրվել է Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը: Այս համակարգի կիրառությամբ իրականացվում է փաստաթղթերի հոսքի արդյունավետ կառավարում,

փաստաթղթերի և կից նյութերի էլեկտրոնային տարբերակների կենտրոնացված պահպանում, փաստաթղթաշրջանառության պատմության գրանցում ու վերահսկում փաստաթղթի շարժի բոլոր փուլերում, կատարողական վերահսկողության ապահովում, անհրաժեշտ փաստաթղթերի արագ որոնում, փաստաթղթերի հետ աշխատանքի միասնական ձևի ապահովում, մի քանի ստորաբաժանումների միաժամանակյա աշխատանքի ապահովում և փաստաթղթերի կորստի բացառում: Ներդրման ընթացքում կազմակերպվել է փորձնական ներդրմալ փուլ, ստեղծվել է համակարգում աշխատելու մեթոդական ուղեցույց և ներկայումս արդյունավետ կիրառվում է բուհի բոլոր ենթակառույցների մասնակցությամբ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի առաքելությունն է տարածաշրջանում դառնալ կրթական, գիտական գործունեություն իրականացնող և նորարարական գաղափարների փոխանցման խթանիչ կենտրոն, որի հիմնական նպատակն է պատրաստել աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին ու մարտահրավերներին պատրաստ որակյալ և մրցունակ մասնագետներ:

Առաջնորդվելով ուսանողակենտրոն մոտեցմամբ՝ ուսումնական ծրագրերի որակը բարելավվել է՝ համաձայն հետևյալ պահանջների՝

1. Ուսումնառության արդյունավետ վերջնարդյունքների ապահովում՝ կրթական ծրագրերի և ուսումնական պլանների վերամշակման շրջանակում,
2. Ուսումնական բեռնվածության հաստատում՝ արտահայտված կրեդիտային համակարգով,
3. Կոմպետենտությանը միտված քննությունների և ստուգարքների կազմակերպում և գնահատման թափանցիկ համակարգ,
4. Կրթական գործընթացների կազմակերպման խորհրդատվության ապահովում, ուղորդում, աջակցություն ուսումնառության տարբեր փուլերում և բուհն ավարտելուց հետո աշխատաշուկայում շրջանավարտների պահանջվածության մշտադիտարկում:

Մասնագիտական կրթական ծրագրեր

2021 թվականի համալսարանում ներդրված են եղել բակալավրի 28 կրթական ծրագրեր /առկա և հեռակա ուսուցմամբ/ և մագիստրատուրայի 11 կրթական ծրագրեր:

Աղյուսակ 11. ՎՊՀ կրթական ծրագրերը (2021-22 ուստարի)

Դասիչ, Մասնագիտություն	Կրթական ծրագիր
Բակալավրի կրթական ծրագիր	
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն	
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
011301.03.6	Սոցիալական մանկավարժություն
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	
011401.01.6	Կենսաբանություն
011401.05.6	Մաթեմատիկա
011401.04.6	Ֆիզիկա
011401.09.6	Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ
011401.11.6	Կերպարվեստ
011401.13.6	Երաժշտական կրթություն
011401.18.6	Պատմություն
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն
011401.03.6	Աշխարհագրություն
022201.00.6 Պատմություն	

022201.01.6	Պատմություն
023101.00.6 Հայոց լեզու և գրականություն	
023101.01.6	Հայոց լեզու և գրականություն
023102.00.6 Օտար լեզու և գրականություն	
023102.01.6	Ռուսաց լեզու և գրականություն
023102.02.6	Անգլերեն լեզու և գրականություն
031301.00.6 Հոգեբանություն	
031301.01.6	Հոգեբանություն
032101.00.6 Լրագրություն	
032101.01.6	Լրագրություն
041301.00.6 Կառավարում	
041301.01.6	Կառավարում (ըստ ոլորտի)
042101.00.6 Իրավագիտություն	
042101.01.6	Իրավագիտություն
053101.00.6 Քիմիա	
053101.02.6	Դեղագործական քիմիա
053102.00.6 Ռադիոֆիզիկա	
055102.01.6	Ռադիոֆիզիկա
056101.00.6 Մաթեմատիկա	
056201.00.6	Մաթեմատիկա
056802.00.6 Ֆինանսական մաթեմատիկա	
056802.01.6	Ակտուարական և ֆինանսական մաթեմատիկա
061101.00.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	
061101.02.6	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա
101801.00.6 Սերվիս	
101801.01.6	Սերվիս
092301.00.6 Սոցիալական աշխատանք	
092301.01.6	Սոցիալական աշխատանք
Մագիստրոսի կրթական ծրագիր	
011101.00.7 Կրթական գիտություններ	
011102.05.7	Կրթության կառավարում
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն	
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն
011401.05.7	Մաթեմատիկա
011401.18.7	Պատմություն
011401.06.7	Ինֆորմատիկա
011401.01.7	Կենսաբանություն
011401.02.7	Քիմիա
031301.00.7 Հոգեբանություն	
031301.07.7	Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն (հեռակա)
041301.00.7 Կառավարում	
041301.17.7	Հանրային կառավարում

Բարձրագույն կրթության համակարգում բարեփոխումների գործընթացը ենթադրում է կրթական ծառայություններ մատուցողի, շահառուների և գործատուների փոխշահավետ համագործակցություն: Այս համատեքստում խիստ կարևոր է մասնագիտական նոր կրթական ծրագրերի մշակման և ներդրման խնդիրը:

2021թ. ռեկտորի հրամանով ստեղծվել են աշխատանքային խմբեր «011301.04.7.Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «011401.09.7 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «061102.01.7 Ծրագրային ճարտարագիտություն» մագիստրոսական կրթական ծրագրերի ուսումնական պլանների մշակման նպատակով: Ուսումնական պլանի մշակման գործընթացը իրականացվել է համապատասխան պրոֆեսորադասախոսական անձնակազմի, համալսարանի որակի բաժնի ներկայացուցչի, գործատուների, բակալավրիատի բարձր կուրսերի և մագիստրատուրայի ուսանողների հետ անցկացված քննարկումների, ֆոկուս խմբերի, կլոր սեղանների և հարցումների արդյունքում: Ուսումնական պլանները քննարկվել են ֆակուլտետային խորհրդում և ներկայացվել գիտխորհրդի հաստատմանը: Մագիստրոսական կրթական ծրագրերի լիցենզավորման փաթեթը ուղարկվել է ԿԳՄՍ նախարարություն, ստացել ենք դրական պատասխան:

ՎՊՀ գիտական խորհրդի սեպտեմբերի 23-ին տեղի ունեցած նիստում որոշում ընդունվեց 2022-2023 ուստարվա նշված կրթական ծրագրերը ներառել մագիստրոսի կրթական ծրագրով առկա ընդունելության մասնագիտությունների ցանկում:

Ընդունելություն

2016-2021թթ.-ին դիմորդների թիվն ըստ կրթական ծրագրերի և ուղղությունների ունի հետևյալ պատկերը.

Աղյուսակ 12. Դիմորդների թիվն՝ ըստ կրթական ծրագրերի և ֆակուլտետների

Դիմորդների թիվը	**2017-18**	**2018-19**	**2019-20**	**2020-21**		**2021-2022**
	457	**319**	**503**	**586**		**414**
Բակալավրիատ (առկա)	**366**	**219**	**407**	**Բակալավրիատ (առկա)**	**489**	**327**
Բանասիրական ֆակուլտետ	90	36	66	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	**127**	**79**
Մանկավարժության ֆակուլտետ	88	61	97	Հասարակական գիտությունների ֆակուլտետ	**306**	**193**
Պատմաշխարհագրական ֆակուլտետ	79	56	114	Բնական գիտությունների ֆակուլտետ	**56**	**56**
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ	66	40	78			
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ	43	26	52			
Մագիստրատուրա	**91**	**100**	**91**	**Մագիստրատուրա**	**108**	**54**

Բանասիրական ֆակուլտետ	29	26	20	Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	**44**	**29**
Մանկավարժության ֆակուլտետ	12	19	9	Հասարակական գիտությունների ֆակուլտետ	**36**	**6**
Պատմաշխարհագրական ֆակուլտետ	21	21	22	Բնական գիտությունների ֆակուլտետ	**28**	**11**
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ	13	14	21			
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ	16	20	19			
Ասպիրանտուրա (հայցորդություն)	0	11	5		**3**	**2**
Լեզվաբանություն	0	3	1		**2**	
Բանասիրական գիտություններ	0	1	1		**1**	
Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ	0	2	0		**0**	**1**
Մանկավարժական գիտություններ	0	2	2		**0**	**1**
Կենսաբանական գիտություններ	0	0	0		**0**	
Փիլիսոփայական գիտություններ	0	0	0		**0**	
Տնտեսագիտություն	0	1	0		**0**	
Պատմություն	0	2	1		**0**	

Ստորև ներկայացվում է նաև բակալավրիատի առկա ուսուցման դիմորդների թվի և ընդունվածների թվի հարաբերությունը վերջին տարիներին.

Աղյուսակ 13. ՎՊՀ ընդունելության բաժնեմասը կենտրոնացված ընդունելության համակարգի ընդհանուր ծավալում (բակալավրիատ, առկա ուսուցում)

Չափանիշ	*2016-17*	*2017-18*	*2018-19*	*2019-20*	*2020-21*	*2021-2022*
Կենտրոնացված ընդունելության ծավալը	10995	9073	5691	10421	10922	13128
ՎՊՀ ընդունվածների թիվը	381	298	190	351	355	327
ՎՊՀ բաժնեմասը ընդունելության ընդհանուր ծավալում	**3.47**	**3.28**	**3.34**	**3.37**	**3.25**	**2.49**

ՎՊՀ բաժնեմասը կենտրոնացված ընդունելության ծավալում որոշակիորեն նվազել է, թեպետ նկատվում է հարաբերական կայունություն:

Ուսումնական գործընթացի կազմակերպման առումով կարևոր են ընդունելության արդյունքները: 2021թ. միասնական քննությունների արդյունքների հիման վրա կատարվել է վերլուծություն և *դեկտեմբերի* դրությամբ ունենք հետևյալ պատկերը.

- **Առկա բակալավրիատ** - 2021-2022 ուստարվա դիմորդների քանակը 414 է, սակայն հատկացված է եղել 461 տեղ (նախորդ տարի 488 դիմորդ՝ 447 տեղի դիմաց: Դիմորդների մեծ քանակը պայմանավորված է եղել ընդունելության քննությամբ): Ընդունվել է 327 դիմորդ, թափուր տեղերի քանակը եղել է 134: Ընդունվածների քանակը կազմում է հատկացված տեղերի 70.9%-ը: Մրցութային մասնագիտություններ են եղել՝ «Անգլերեն լեզու և գրականություն», «Իրավագիտություն», «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» մասնագիտությունները:
- **Հեռակա բակալավրիատ** - Ունեցել ենք 162 դիմորդ, ընդունվել է 123-ը: Նախորդ ուստարում 143 դիմորդից ընդունվել է 83-ը: Ընդունված դիմորդներ չունեն «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա», «Քիմիա», «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությունները: 100% ընդունելության արդյունք ունեն «Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ», «Պատմություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Հոգեբանություն» և «Իրավագիտություն» մասնագիտությունները: Մինչև 50% ընդունելության արդյունքներ ունեն «Կենսաբանություն», «Երաժշտական կրթություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ֆիզիկա», «Դեղագործական քիմիա», «Մաթեմատիկա» մասնագիտությունները:
- Առկա մագիստրատուրա - Դիմորդների քանակը 2021-2022 ուստարում 51 է, նախորդ տարում 96 էր: 51 դիմորդից ընդունվել է 48-ը:
- Հեռակա մագիստրատուրայում դիմորդների քանակը 10-ն է, ընդունվել է 6 դիմորդ (նախորդ ուստարում 10 դիմորդներն էլ ընդունվել են):

Ուսանողական համակազմ

Վերջին տարիներին հիմնական ուսանողական համակազմի թիվը նվազում է:

Աղյուսակ 14. Ուսանողական համակազմ

Չափանիշ	2017թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.	
Հիմնական ուսանողական համակազմը	**2492**	**2253**	**1984**	**1814**	**1728**	
Բակալավրիատ (առկա)	**1274**	**1213**	**1049**	**1018**	**1020**	
Բանասիրական ֆակուլտետ	292	284	248	239	**Հումանիտար գիտությունների ֆակուլտետ**	281
Մանկավարժության ֆակուլտետ	401	362	305	257	**Հասարակական գիտությունների ֆակուլտետ**	487
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ	324	292	250	241	**Բնական գիտությունների ֆակուլտետ**	252
Ֆիզիկամաթեմաթիկական ֆակուլտետ	161	182	161	183		
Կենսաբանաքիմիական	96	93	85	98		

Բակալավրիատ (հեռակա)	1112	900	814	675		570
Մագիստրատուրա (առկա, հեռակա)	106	140	121	120		138
Այդ թվում՝ օտարերկրյա ուս. համակազմը	31	32	23	17		20

2018-20 տարիների համեմատ մեծացել է մագիստրատուրայի հիմնական ուսանողական համակազմը, իսկ նախորդ տարվա համեմատ՝ օտարերկրյա ուսանողական համակազմը:

Հեռակա ուսուցման համակարգի նկատմամբ հետաքրքրությունը նվազում է: Փաստը մտահոգիչ է և վկայում է դիմորդների ոչ բավարար գիտելիքների մասին: Հիմնական պատճառներից է նաև ընդունելության քննությունների թափանցիկությունը և որևէ ազդեցության բացառումը:

Աղյուսակ 15. Հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համակազմը

Չափանիշ	2017թ.	2018 թ.	2019 թ.	2020 թ.	2021 թ.	
Հեռակա ուսուցմամբ ուսանողների համակազմը	**1112**	**900**	**814**	683	**588**	
Բակալավրիատ	**1112**	**900**	**814**	**675**		**570**
Բանասիրական ֆակուլտետ	166	138	109	78	**Հումանիտար գիտությունների ֆակուլտետ**	106
Մանկավարժության ֆակուլտետ	335	289	260	214	**Հասարակական գիտությունների ֆակուլտետ**	344
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ	299	231	219	177	**Բնական գիտությունների ֆակուլտետ**	120
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ	116	95	91	92		
Կենսաբանաքիմիական ֆակուլտետ	196	147	135	114		
Մագիստրատուրա	0	0	0	8		18

2016-21 թվականների ընթացում ՎՊՀ դիմորդների ընդհանուր հոսքում իգական սեռի հաշվեկշիռը հաստատուն է, կազմում է մոտավորապես 70%, մինչդեռ ՎՊՀ ընդունվածների համեմատությամբ ցուցանիշը նվազման միտում ունի: Եթե 2016-18 թվականներին կազմել է 80.5%, ապա 2018-21 թվականներին՝ մոտավորապես 75%: Ցավոք, այս ցուցանիշը փաստում է բարձրագույն կրթության նկատմամբ արական սեռի հետաքրքրության նվազման մասին:

Առաջադիմություն

Համալսարանի ուսանողների առաջադիմությունը հուսադրող չի կարելի համարել. վերջին երկու տարիներին սովորողների առաջադիմությունը նվազել է:

Առաջադիմությունը սովորաբար ավելի բարձր է լինում գարնանային քննաշրջանի ժամանակ: Նույնը նկատվել է 2020-2021 ուստարում: Առկա ուսուցման համակարգի ուսանողների շուրջ 10%-ը սովորում է միայն գերազանց, իսկ 28%-ը «լավ» և «գերազանց» գնահատականներով, կարևոր է նաև միայն «բավարար» գնահատականներով սովորողների ցածր տեսակարար կշիռը. այն տատանվում է 26%-ի միջակայքում: Շատ ավելի բարձր արդյունքներ ունենք մագիստրոսական կրթության համակարգում. միայն «գերազանց» գնահատականներով սովորում է մագիստրանտների 57.3%-ը, «լավ» և «գերազանց» գնահատականներով՝ 35.2%-ը, միայն «բավարար»-ով սովորող մագիստրանտ չունենք:

2021թվականին առկա բակալավրիատի համակարգից հեռացվել է 22 ուսանող, սեփական դիմումի համաձայն ազատվել է 24-ը: Հեռակա բակալավրիատից հեռացվել է 43 ուսանող, սեփական դիմումի համաձայն ազատվել է 5-ը: Առկա մագիստրատուրայից հեռացվել է 3 ուսանող, սեփական դիմումի համաձայն ազատվել է 3 ուսանող: 2021թ.-ին ընդհանուր առմամբ համալսարանից հեռացվել է 68 ուսանող, ազատվել՝ 32-ը:

Որքան էլ փորձենք չընդունել առկա ուսուցման համակարգում ներդրված բազմագործոնային գնահատումը, չպետք է անտեսենք այն փաստը, որ ուսանողների հիմնական մասը չի ներկայանում հանրագումարային քննության՝ բավարարվելով բակալավրիատի ընթացիկ քննությունների ժամանակ ձեռքբերածով:

Ամփոփիչ ատեստավորում

2020-2021 ուստարվա առկա և հեռակա համակարգերի ամփոփիչ ատեստավորման աշխատանքները հաջողությամբ կազմակերպվել և իրականացվել են: Բակալավրի առկա ուսուցմամբ հաջողությամբ ամփոփիչ ատեստավորում է իրականացվել 20, մագիստրոսական կրթությամբ՝ 6, հեռակա ուսուցման համակարգում 14 մասնագիտություններով: Հումանիտար գիտությունների ֆակուլտետում առկա բակալավրիատն ավարտել է 68 ուսանող, հեռակա բակալավրիատը՝ 22 ուսանող, առկա մագիստրատուրան՝ 23: Հասարակական գիտությունների ֆակուլտետում առկա բակալավրիատն ավարտել է 106 ուսանող, հեռական՝ 108 ուսանող, առկա մագիստրատուրան՝ 11: Բնական գիտությունների ֆակուլտետում առկա բակալավրիատն ավարտել է 66 ուսանող, հեռակա բակալավրիատը՝ 35 ուսանող, առկա մագիստրատուրան՝ 21:

Ունեցել ենք պատերազմի մասնակից 15 ուսանող, որոնք 2019-2020 ուստարվա շրջանավարտ են, բայց ամփոփիչ ատեստավորման քննությունները կազմակերպվել է 2021թվականին:

Աղյուսակ 16. 2021թ. ամփոփիչ ատեստավորման արդյունքներն՝ ըստ ֆակուլտետների

Ֆակուլտետ	***Բակալավրիատ առկա***	***Բակալավրիատ հեռակա***	***Մագիստրատուրա առկա***
Հումանիտար գիտությունների ֆակուլտետ	68	22	23
Հասարակական գիտությունների ֆակուլտետ	106	108	11
Բնական գիտությունների ֆակուլտետ	66	35	21

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունները մանրամասն ուսումնասիրվել և քննարկվել են, կատարվել են համապատասխան հետևություններ: Հաշվետվություններում հիմնականում առկա են հետևյալ ուղղորդումները.

- ավարտական աշխատանքները հետագայում դարձնել ասպիրանտական թեզի թեմաներ,
- գործնականում լայն կիրառության հնարավորություն ունեցող թեմաները ներդնել համապատասխան ոլորտներում,
- ապահովել փորձարարական հնարավորությունների ընդլայնում:

Կարողությունների զարգացում և վերապատրաստումներ

Համալսարանում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում շարունակական կրթության կազմակերպմանը, որը հանգեցնում է անհատի գիտելիքների, հմտությունների, կարողությունների և արժեքային համակարգի կատարելագործմանը՝ միաժամանակ ապահովելով անհատի կողմից ուսումնառության ձևի ընտրության ճկունությունը, սոցիալական շարժունությունը, անհատական ակտիվ զարգացումը և սոցիալականացման բարձր մակարդակը:

2021թ. կազմակերպվել են վերապատրաստումներ.

1. Պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար իրականացվել են դասավանդման հմտությունների և նորարարական դասավանդման և ուսումնառության մեթոդների ուսուցման երկամսյա վերապատրաստման դասընթացներ՝ MOODLE և Zoom հարթակներում, որին մասնակցել է 21 դասախոս:
2. Սույն թվականի ապրիլին «ERASMUS+ PRINTEL» ծրագրի շրջանակում անցկացվել են «Փոփոխություն լսարանում. նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է 107 աշխատակից:

3. Կազմակերպվել են «Հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավասագիր)» ստանալու համար դիմած անձանց վերապատրաստման դասընթացներ, որին մասնակցել է 33 անձ (դասընթացի տևողությունը՝ 90 ժամ, դասընթացը հաջողությամբ հանձնել է 31-ը, իսկ 2-ը ստացել են անբավարար)։
4. Կազմակերպվել է «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման» դասընթաց (դասընթացի տևողությունը՝ 110 ժամ, դասընթացին մասնակցել են 142 ուսուցիչ, վերապատրաստման դասընթացներն իրականացվել են 10 մասնագիտությունների գծով՝ «Ֆիզիկական կուլտուրա», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն», «Կենսաբանություն», «Քիմիա», «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Տարրական մանկավարժություն»:

Հաջորդ տարվա վերապատրաստումների կազմակերպման նպատակով իրականացվել են որոշ մեթոդական աշխատանքներ.

- Մշակվել է «Հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցչի օգնականների» 40 ժամյա դասընթաց և ներկայացվել ԿԳՄՄ նախարարություն՝ հաստատման։
- Վերամշակվել է «Հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենների հավակնորդների հավաստագրման» դասընթացի ծրագիրը։
- Լրամշակվել է «Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստման» դասընթացի ծրագիրը՝ ավելացվելով ևս 3 մասնագիտություններ՝ «Հասարակագիտություն», «Տեխնոլոգիաներ», «Նախնական զինվորական պատրաստություն»։

Համալսարանը կարևորում է շրջանավարտների և կարիերայի աջակցման գործընթացը, որի շրջանակներում կազմակերպվել են.

- «Աշխատանքի տոնավաճառ» խորագրով միջոցառում, որին մասնակցել են 16 կազմակերպություններ: Մեկ հարկի տակ էին հավաքվել մարզի գործատուները, բուհի ուսանողներն ու շրջանավարտները: Աշխատանքի տոնավաճառի ընթացքում եղան վարպետաց դասեր, կարճ սեմինարներ, կնքվեց համագործակցության հուշագիր: Տոնավաճառի մասնակից գործատուներին հանձնվեցին շնորհակալագրեր:
- հանդիպում Վանաձորի ուսումնական հաստատությունների կարիերայի պատասխանատուների հետ: Հանդիպման ընթացքում իրականցվել է փորձի փոխանակում, քննարկվել են մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման աշխատանքների ընթացքում ի հայտ եկող խնդիրները և դրանց հնարավոր լուծման տարբերակները:
- բանավեճ Լոռու տարածաշրջանային քոլեջի ուսանողների հետ, թեման՝ ‹‹Մասնագիտությունն է ձևավորում բնավորություն, թե բնավորությունը՝ մասնագիտություն››:

- ճանաչողական այցեր՝ ‹‹Cons Alliance›› հաշվապահական կենտրոն, ‹‹Ադվոկարտ›› իրավաբանական կենտրոն, ‹‹Ռոյալ փելիս›› հյուրանոց, ‹‹Օրրան›› բարեգործական կենտրոն, ‹‹NGO center›› կենտրոն: Նաև կազմակերպվել է ‹‹Սմայլս›› ՍՊԸ-ում եռօրյա պրակտիկա՝ ‹‹Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում›› 2-րդ, 3-րդ կուրսի ուսանողների համար: Պրակտիկայի ավարտից հետո տրվել են հավաստագրեր:
- հանդիպումներ ոլորտային մասնագետների հետ՝ ‹‹Մաթեմիկ›› կենտրոնի տնօրեն Տիգրան Առուշանյանի հետ, ‹‹Արկատ›› իրավաբանական կենտրոնի փաստաբան Մարիամ Սիմոնյանի հետ՝ «աշխատանքային պայմանագիր» թեմայով:
- Կազմակերպվել են սեմինարներ «Գրագետ շնորհանդեսի ստեղծման գաղտնիքներ» և «Ինչպե՞ս գրել CV և ինչպես անցնել գործատուի մոտ հարցազրույց» թեմաներով:
- Կազմակերպվել է հանդիպում բարձր կուրսերում սովորող ուսանողների, շրջանավարտների և «Դասավանդիր Հայաստան» («Teach for Armenia») ծրագրի ներկայացուցիչների հետ:

Պարբերաբար իրականացվում են համալսարանի շրջանավարտների բազայի համալրման աշխատանքներ: Աշխատաշուկայում թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվությունը մշտապես հասանելի է եղել ՎՊՀ ուսանողներին ու շրջանավարտներին:

Կնքվել է հուշագիր Վանաձորի պետական համալսարանի և Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոնի միջև:

3. ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

3.1. ԿՐԹԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ

Համավարակը նոր մարտահրավերներ առաջադրեց կրթական համակարգին, և Համալսարանի համար խնդիր առաջացավ հնարավորիս սեղմ ժամկետներում անցում կատարել հեռավար կրթությանը: Բուհն արդեն ուներ գործարկված հեռավար կրթության հարթակ ոչ ֆորմալ կրթություն կազմակերպելու համար: Իսկ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի դասընթացների հեռավա դասավանդումն ըստ անհրաժեշտության կազմակերպվում են հետևյալ համակարգերի միջոցով.

- Moodle հարթակ - բավականին ճկուն համակարգ է, և հնարավորություն է տալիս կիրառելու դասավանդման և ուսումնառության բոլոր գործիքները՝ առցանց դասախոսություն, գիտելիքների ստուգում, ինքնուրույն աշխատանքի ներկայացում, հաճախումների գրանցում, հետադարձ կապի ապահովում և այլն: Moodle համակարգի կիրառության համար դասախոսական կազմի մի մասը (հատկապես ավագ սերնդի ներակայացուցիչները) դժվարություններ ուներ: Փորձեցինք համակարգի կիրառության հմտությունների ձևարվորման համար փոքր խմբերով «փորձառուների» փորձի փոխանակման դասընթացներ կազմակերպել, սակայն արդյուավետությունը նրանց համար շատ բարձր չէր: Այդ պատճառով կիրառվեց այլընտանքային Zoom հարթակը, որը ներառվեց նաև Moodle համակարգում՝ որպես գործիքակազմի համալրում:
- Zoom հարթակը ավելի լայն կիրառություն ունեցավ, և բացի դասավանդումից, այս հարթակի հնարավորություններն օգտագործվել են գիտելիքների ստուգման համակարգում՝ ընթացիկ քննություններ, հանրագումարային քննություններ, ամփոփիչ ատեստավորում: Գիտելիքների առցանց ստուգման հաջորդական քայլերի նկարագրությունը (ալգորիթմ) քննարկվել և հաստատվել է ռեկտորառի նիստում և հասանելի է եղել բոլոր շահառուներին՝ դասախոս, ուսանող, ուսխորհուրդ և այլն:
- Google Attendance գործիքը կիրառվել է էլեկտրոնային մատյանների վարման նպատակով: Այն տեղադրված է եղել Google Drive միասնական հարթակում: Էլեկտրոնային դասամատյանը վարել է դասընթացը դասավանդող դասախոսը, հասանելի է եղել տվյալ կուրսի ուսանողներին, ամբիոնի վարիչին, դեկանին որպես «դիտողներ» (viewer):
- Trello հարթակը կիրառվում է կառավարման նպատակով, մասնավորապես օգտագործվում է որպես ռեկտորատի նիստերի օրակարգի սահմանման և տարածման, որոշումների և հանձնարարականների, պլանավորման և հրատապ տեղեկատվությունների տարածման գործիք:

Նշված հարթակների կիրառությամբ պայմանավորված մեծացվել է ինտերնետ կապի հզորությունը, որի մասին արդեն նշվել է վերևում:

Իրականացվել է համալսարանի նոր կայքի նախագծում, ստեղծում և ձևավորում: Նոր կայքն առավել պարզեցված է, ինչը հնարավորություն է տալիս հեշտությամբ գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը: Առանձնացված ենթաբաժիններում համապատասխանաբար ներկայացված են դիմորդների, ուսանողների և աշխատակիցների համար անհրաժեշտ նյութեր: Կայքը կատարելագործվել և բերվել է վերջնական տեսքի:

3.2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ, ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼՍԱՐԱՆՆԵՐ

Համալսարանը բավականին հագեցած է տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակակից սարքավորումներով. յուրաքանչյուր տարի տարբեր ճանապարհներով (Համալսարանի բյուջե, Տեմպուս, Էրազմուս+ և այլ ծրագրեր) ձեռք են բերվել նորերը:

Համակարգչային լսարանների, լաբորատորիաների վերախմբավորմամբ 2021 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ կրթական գործընթացը սպասարկում են 13 համակարգչային լսարան և լաբորատորիա՝ 176 համակարգչով. գործնական ժամերի ընթացքում յուրաքանչյուր ուսանող օգտվում է առանձին համակարգչից: Բացի այդ, 162 համակարգիչ ևս ներգրավված են արտաուսումնական գործընթացների մեջ:

2021թ ընթացքում, ըստ Համալսարանի կարիքների, բարձրացրել է ինտերնետ-կապի արագությունը, ստեղծվել է 6 գործող Zoom լսարան (ևս 10 շարժական նման լսարանի հնարավորություն կա): Իրականացվել է ցանցի բարելավում.

Լաբորատորիաներ և կաբինետներ, համակարգչային լսարաններ

Կաբինետների, համակարգչային լսարանների ապահովվածությունը ընդհանուր առմամբ բավարարում է դասավանդման կարիքները: 2021թ. ձևավորվորվել են համակարգչային նոր լսարաններ: Դրանք են՝

<u>1-ին ուսումնական մասնաշենքում</u>

203 լսարան - համակարգիչներով համալրում, պրոյեկտորի տեղադրում,

303 լսարան - համակարգիչներով համալրում, պրոյեկտորի տեղադրում,

208 լսարան - համակարգիչներով համալրում, պրոյեկտորի տեղադրում,

301 լսարան – ArmDoct ծրագրով՝ նոր համակարգիչներով համալրում,

310 լսարան -համակարգչային սեղանների ձևափոխու ,պրոյեկտորի տեղադրում,

<u>2-րդ ուսումնական մասնաշենքում</u>

7-րդ լսարան –ArmDoct ծրագրով՝ նոր նոթբուքներով համալրում,

8-րդ լսարան - համակարգիչներով համալրում,

<u>քոլեջում</u>

39 լսարան - նոր համակարգիչներ, համակարգչային սեղաններ

Ընդհանուր և լսարանային տարածք

2016-2021թթ. պատկերն այսպիսին է.

Աղյուսակ 17. Մեկ ուսանողին ընկնող ուսումնական (լսարանային) տարածքը

Չափանիշ	*2016-17*	*2017-18*	*2018-19*	*2019-20*	*2020-21*
Ուսումնական տարածքը (մ²)	7453.8	7453.8	7453.8	7453.8	7434.3
Ուսանողների թիվը	2492	2253	1984	1814	1728
Մեկ ուսանողին ընկնող ուսումնական տարածքը	**3**	**3.3**	**3.75**	**4.1**	**4.3**

Աղյուսակ 18. Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը

Չափանիշ	*2016-17*	*2017-18*	*2018-19*	*2019-20*	*2020-21*
ՎՊՀ-ի ընդհանուր տարածքը (մ²)	10860.9	10860.9	10860.9	10860.9	10860.9
Ուսանողների թիվը	2492	2253	1984	1814	1728
Մեկ ուսանողին ընկնող ընդհանուր տարածքը	**4.4**	**4.8**	**5.47**	**5.9**	**6.2**

Ցուցանիշի բարելավումը պայմանավորված է ոչ թե նոր տարածքների ձեռքբերմամբ, այլ ուսանողների թվաքանակի նվազմամբ:

Աղյուսակ 19. Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը (առկա ուսուցում)

Չափանիշ	**2016-17**	**2017-18**	**2018-19**	**2019-20**	**2020-21**
Ակադեմիական խմբերի թիվը	220	168	186	181	177
Լսարանային ֆոնդը (լսարանների քանակը)	77	77	69	61	69
Մեկ ակադեմիական խմբին ընկնող լսարանների քանակը	**0.4**	**0.5**	**0.37**	**0.38**	**0.39**

3.3. ԳՐԱԴԱՐԱՆ ԵՎ ԳՐԱՊԱՇԱՐ

2021թ. գրադարանն ընթերցողներին սպասարկել է միայն էլեկտրոնային պատվերի հիման վրա՝ բացառությամբ այն ժամանակահատվածների, երբ կապի կամ կայքի խափանումներ են եղել: Այդ ընթացքում սպասարկումը կատարվել է թղթային պահանջաթերթիկների միջոցով, և ընթերցողին տեխնիկական խնդիրների պատճառով հնարավորինս քիչ անհարմարություն է պատճառվել:

Համավարակի իրողությամբ պայմանավորված պարբերաբար հեռավար ուսուցման անցումն իր բացասական ազդեցությունը թողեց գրադարանի սպասարկման համակարգի վրա: Այնուհանդերձ գրքատացքի և հաճախումների ցուցանիշները բարձր են նախորդ տարվա ցուցանիշներից:

Աղյուսակ 20. Գրադարանի հաճախումը և տացքը նախորդ տարվա համեմատությամբ

Ցուցանիշ	*2020*	*2021*
Հաճախումների թիվը	4694	6635
Տացքը	3092	4255

2021թ. 2 անգամ կատարվել է ընթերցողական գրքույկների վերստուգում՝ հեռացված, ազատված կամ բուհն ավարտած ուսանողների գրքույկները մարվել են, միջոցներ են ձեռնարկվել գրքերի ետ վերադարձը կազմակերպելու ուղղությամբ: Նոր ընթերցողների գրանցման համար գրադարանում տպել և կազմել ենք ավելի քան 500 ընթերցողական գրքույկներ:

Նախորդ տարիների համեմատությամբ նկատվում է նոր ընթերցողների թվաքանակի ավելացում: Սակայն ունենք ընթերցողների ընդհանուր թվի նվազում, ինչն առավելապես պայմանավորված է բուհի ուսանողների ընդհանուր թվաքանակի նվազման հանգամանքով:

Աղյուսակ 21. Գրադարանի ընթերցողների թիվը նախորդ տարվա համեմատությամբ

Ցուցանիշ	*2020*	*2021*
Նոր ընթերցողների թիվը	292	325
Ընդհանուր ընթերցողների թիվը	1546	1476

Ընթերցասրահում առկա ինտերնետ հասանելիությամբ 10 համակարգիչներից հաշվետու ժամանակահատվածում օգտվել են ավելի քան 700 ուսանողներ:

Ուսումնական տարվա սկզբին համապատասխան ստորաբաժանման հետ համագործակցությամբ ձևավորել, տպել և դեկանների օժանդակությամբ ուսանողներին ենք տրամադրել հատուկ էջանիշներ՝ էլեկտրոնային քարտարանի ու հեռահար պատվերի ծրագրին, էլեկտրոնային գրադարանին և ուղեցույց-բուկլետին համապատասխան QR կոդերով, որոնք դյուրին են դարձնում այդ ծրագրեր մուտք գործելը և դրանցից օգտվելը, արդիականացնում են գրադարանային ծառայությունների մատուցումը:

2021 թ. 2-րդ կիսամյակից գրադարանը իրականացրել է գրադարանային քարտերի էլեկտրոնային շարվածքը և տպել դրանք՝ նախկին ձեռագիր գրելու փոխարեն:

Աշխատանքներ են տարվել գրադարանից օգտվելու կարգի վերամշակման ուղղությամբ: Այս առումով հատկանշական է կորցրած գրքի փոխարինման կարգի հստակեցումը: Համաձայն ֆինանսատնտեսական հանձնաժողովի 2021թ. մարտի 19-ի

որոշման և ռեկտորի թիվ 168 Ն/Մ հրամանի (22.03.21թ)՝ կորցրած կամ ետ չվերադարձված գրքերի փոխհատուցման համար սահմանվեց հետևյալ կարգը.

1. Վերականգնել գրադարանային միավորը նույն գրքի մեկ այլ օրինակով:
2. Գանձել տվյալ գրադարանային միավորի շուկայական արժեքին համարժեք գումար:
3. Տվյալ գրադարանային միավորի շուկայական արժեքի որոշման անհնարինության դեպքում համարժեք գումար սահմանել 10.000 ՀՀ դրամը:

Ընդ որում, 2 և 3 կետերի կատարման արդյունքում առաջացած ֆինանսական միջոցները կօգտագործվեն հաջորդ ֆինանսական տարում՝ գրադարանային ֆոնդը համալրելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում 2 և 3 կետերի համաձայն փոխարինվել է 8 միավոր գրականություն՝ ընդհանուր վճարվել է 50.900 դրամ:

2021 թ. փետրվարից գրադարանի անձնակազմը սկսել է «Ոսկե ֆոնդ»-ի՝ հնատիպ և հազվագյուտ գրականության վերագույքագրման աշխատանքները՝ զուգահեռ իրականացնելով դրանց մատենագրությունը, քարտագրումը և ցուցակների թվայնացումը:

Բուհի պրոֆեսորադասախոսական կազմին և ուսանողությանը տեղեկատվական ռեսուրսներով ապահովելու նպատակով շարունակվել են համացանցում հասանելի էլեկտրոնային գրադարանային համակարգերի հնարավորությունների ուսումնասիրությունը, համագործակցության պայմանները: Բանակցային աշխատանքներ են ընթացել արտասահմանյան հայալեզու VLUME գրքային պաշարների բազային և ռուսական Znanium էլեկտրոնային-գրադարանային համակարգին բաժանորդագրվելու ուղղությամբ: Վերջիններիս կողմից տրամադրվել են մուտքի բանալիներ՝ փորձաշրջանով՝ պաշարների բովանդակությանը ծանոթանալու համար: Այս ուղղությամբ համագործակցել ու համատեղ քննարկում ենք կազմակերպել ամբիոնների վարիչների և ռեկտորի հետ: Հատկապես քննության է առնվել էլեկտրոնային գրադարանային համակարգերի առաջարկի և մեր պահանջարկի համապատասխանությունը, քանի որ բուհական գրադարանի առաջնային խնդիրն է գիտատեղեկատվական պաշարները համապատասխանեցնել ընթացիկ ուսումնական ծրագրերին:

2021 թ. գրադարանը շարունակել է բաժանորդագրությունը Իրտեկ իրավաբանական-տեղեկատվական համակարգին, իսկ պարբերական հրատարակությունների բաժանորդագրությունը կազմել է 3 անուն օրաթերթ:

«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանողների պրակտիկայի շրջանակում գրադարանը կազմակերպել է հատուկ սեմինար-քննարկումներ, ներկայացվել են գրադարանի տարաբնույթ աշխատանքների նրբությունները, գրքի անցած ուղին գրադարանում, գրադարանի միջնորդ դերը գիրք-ընթերցող համակարգում:

2021 թ. փետրվարի 19-ին՝ գիրք նվիրելու օրվա առթիվ գրադարանը կազմակերպել է վիկտորինա, հաղթողն ստացել է գիրք՝ որպես նվեր:

Հոկտեմբերի 7-ին՝ Գրադարանավարի օրվա առթիվ կազմակերպվել է միջոցառում-քննարկում գրադարանների սոցիալական դերի և ֆունկցիաների վերաբերյալ, 2021 թ. ակտիվ ընթերցողները ստացել են պատվոգրեր:

Հաշվետու տարում շուկայի առաջարկի հիման վրա բուհի մասնագիտական ամբիոնների հետ համատեղ գրադարանը կազմել և գնումների բաժին է ներկայացրել առարկայական գրքագնման ցուցակները, որոնց հիման վրա նախորդ տարեվերջին գնվել, այս տարեսկզբին մշակվել և ընթերցողին է հանձնվել 89 միավոր մասնագիտական նոր գրականություն (ցանկը տեղադրված է բուհի կայքում և գրադարանի ֆեյսբուքյան էջում):

Եվս 32 միավոր գիրք գնվել է հեղինակից: Ընդհանուր առմամբ հաշվետու ժամանակաշրջանում գնվել է 121 միավոր գիրք՝ 593.920 դրամ ընդհանուր արժողությամբ:

Հատկապես կարևորում ենք առարկայական ուսումնական փաթեթներում ներառված, սակայն գրադարանի ֆոնդում բացակայող գրքերը ձեռք բերելու անհրաժեշտությունը և հնարավորինս ընդգրկում ենք գրքագնման ցուցակներում: Նմանատիպ հերթական գնումը կազմակերպվել է հավուր պատշաճի, սակայն գնման աճուրդին մասնակցող չի եղել, հետևաբար գնում տեղի չի ունեցել: Խնդիրները քննարկվել են ռեկտորի և հաշվապահության հետ: Նախատեսվում է հաջորդ տարում գրքագնման այլ մեթոդներ և ընթացակարգ կիրառել:

Ինչպես նախկինում, այս տարի ևս համալրման խնդիրը մասնակիորեն լուծվել է առանձին հեղինակներից, անհատ քաղաքացիներից և կազմակերպություններից ստացված նվիրատվությունների միջոցով: Այս ճանապարհով հաշվետու տարում ստացվել է 448 միավոր գիրք: Նշենք, որ որպես նվեր գրադարանն ընդունում է բուհի ուսումնագիտական գործընթացի համար անհրաժեշտ գրականություն, որպեսզի նվիրատվության միջոցով կատարվող համալրումը միայն քանակական բնույթ չկրի:



Նկար 7. Նվիրատված և գնված գրքերի հարաբերակցությունն ըստ տարիների

2021թ. դեկտեմբերի 1-ի դրությամբ գրադարանի գրաֆոնդը կազմում է 138.711 միավոր: Գրադարանի հավաքածուներում առկա գրականությունն ըստ լեզուների բաշխվում են հետևյալ կերպ. հայալեզուն՝ 57. 879, օտարալեզուն՝ 78. 332 միավոր, որից 73.245-ը՝ ռուսալեզու: Գրաֆոնդի շուրջ 2500 միավորը հնատիպ և հազվագյուտ գրքերն են:



Նկար 8. Հայալեզու, ռուսալեզու և օտարալեզու գրաֆոնդերի տոկոսային հարաբերությունը

Շարունակել ենք աշխատանքները էլեկտրոնային գրադարանի պաշարների համալրման ուղղությամբ: Տարեվերջին ՎՊՀ էլեկտրոնային գրադարանի ծրագրի 54 բաժիններում ներբեռնված է տարալեզու 11.024 միավոր գրականություն, գրանցված են 1. 174 օգտվողներ:

4. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Գիտահետազոտական գործունեությունը բխում է բուհի առաջնահերթություններից և նպատակաուղղված է ինչպես գիտության զարգացմանը, այնպես էլ գիտական արդյունքների ներդրմամբ, հետազոտության և կրթության համադրմամբ ուսուցման որակի բարձրացմանը: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտահետազոտական գործունեության գնահատման և վերլուծության հիմնական նպատակն է կադրային գիտահետազոտական պոտենցիալի ուսումնասիրումը, գնահատումը, հետագա զարգացումը և կատարելագործումը:

Համալսարանում գիտահետազոտական հիմնական միավորը ամբիոնն է: Վանաձորի պետական համալսարանը ունի 8 ամբիոն, որտեղ դասավանդում և գիտական գործունեությամբ են զբաղվում շուրջ 231 դասախոսներ (հիմնական և ժամավճարային), որոնց 53% գիտությունների թեկնածու է, 50% ունի դոցենտի կոչում: Դոկտորների և պրոֆեսորների քանակը կազմում են ընդհանուր պրոֆեսորադասախոսական անձնակազմի համապատասխանաբար 5% :

Աղյուսակ 21. Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի բաշխումը՝ ըստ գիտական աստիճանի և կոչումների

հ/հ	*Ամբիոնի անվանումը*	*Դասա-խոսական կան կազմի /մարդ/*	*Հաստիքների քանակ*	*Գիտական աստիճան*		*Գիտական կոչում*	
				թեկնածու	*դոկտոր*	*դոցենտ*	*պրոֆեսոր*
1	Արվեստի և սպորտի	27	20.21	4	0	15	2
2	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման	35	21.39	15	0	13	0
3	Հայոց լեզվի և գրականության	22	17.37	20	2	19	2
4	Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	29	24.08	14	3	14	3
5	Մանկավարժության և հոգեբանության	32	25.46	21	1	15	1
6	Պատմության	21	10.91	11	2	7	2
7	Քիմիայի և կենսաբանության	32	19.55	26	3	21	2
8	Օտար լեզուների և գրականության	33	29.15	13	0	11	0
Ընդամենը		**231**	**168.12**	**124**	**11**	**115**	**12**

Ամբիոնի գիտական գործունեության արդյունավետությունը որոշվում է ըստ հետազոտությունների արդյունավետության, կադրային ներուժի, գիտակրթական

տարածքների հետ ինտեգրման, գիտական և (կամ) գիտատեխնիկական արդյունքների առևտրայնացման: Այդ գնահատման հիման վրա որոշվում է ամբիոնի գիտական և գիտատեխնիկական գործունեության արդյունավետության ցուցանիշը:

Գիտությունը դիտարկելով որպես բուհական համակարգի զարգացման կարևոր գրավական՝ անհրաժեշտ է լինում հետևել գիտական հրապարակումների թվի աճին՝ որպես նոր գիտելիքի կրողի: Հրապարակումները գիտական արտադրանքի ստեղծման կարևորագույն մասն են, քանի որ նյութականացնում են հետազոտության արդյունքները և դրանք հասանելի դարձնում ողջ հանրությանը:

2021թ. ընթացքում ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի կողմից տպագրվել է 146 հոդված, հրատարակվել է 5 մենագրություն: Տպագրված հոդվածներից 45% համահեղինակությամբ են: Համահեղինակները հիմնականում ՎՊՀ-ից են, շատ քիչ տոկոս են կազմում այլ բուհերից համահեղինակները: Հոդվածների գերակշիռ մասը վերաբերում է հումանիտար և մանկավարժահոգեբանական ոլորտներին:

Աղյուսակ 22. Ամբիոնների՝ 2021թ-ին կատարված գիտահետազոտական աշխատանքների վիճակագրությունը

հ/հ	***Ամբիոնի անվանումը***	***Ընդհանուր հոդվածների և թեզիսների քանակը***	***Մենագրություն***
1	Արվեստի և սպորտի	3	1
2	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման	16	1
3	Հայոց լեզվի և գրականության	24	1
4	Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	11	
5	Մանկավարժության և հոգեբանության	26	1
6	Պատմության	39	
7	Քիմիայի և կենսաբանության	17	
8	Օտար լեզուների և գրականության	10	1
Ընդամենը		**146**	**5**

Մեծ քանակությամբ գիտական հոդվածների առկայությունը չի ենթադրում, որ ամբիոնի բոլոր դասախոսները ունեն տպագրված հոդվածներ: Շատ դեպքերում միևնույն դասախոսը ունի մի քանի հոդված: Ամբիոններում հոդվածների թվաքանակը դիտարկվել է նաև գիտական հրատարակություններ/դասախոսներ հարաբերակցության տեսանկյունից:

Աղյուսակ 23. Գիտական հրատարակություններ/դասախոսներ հարաբերակցությունը

հ/հ	*Ամբիոն*	*Դասախոսական կազմի թվաքանակ /մարդ/*	*Գիտական հրատարակություն ունեցող դասախոսների քանակը*	*Գիտական հրատարակությունների կազմած ընդհանուր քանակը*	*Հեղինակների հրատարակչական ակտիվության գործակից /մեկ հեղինակի հաշվարկով/*	*Դասախոսների հրատարակչական ակտիվության գործակից /մեկ դասախոսի հաշվարկով/*	*Ակտիվ/գիտական հրատարակություն ունեցող/ դասախոսների մասնաբաժին %*
1	Արվեստի և սպորտի	27	3	3	1.0	0.11	11%
2	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման	35	8	16	2.0	0.46	23%
3	Հայոց լեզվի և գրականության	23	9	24	2.7	1.04	39%
4	Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	29	9	11	1.2	0.38	31%
5	Մանկավարժության և հոգեբանության	32	16	26	1.6	0.81	50%
6	Պատմության	21	13	39	3.0	1.86	62%
7	Քիմիայի և կենսաբանության	32	12	17	1.4	0.53	38%
8	Օտար լեզուների և գրականության ամբիոն	33	8	10	1.3	0.30	24%

«Հեղինակների հրատարակչական ակտիվության գործակից /մեկ հեղինակի հաշվարկով/» և «Դասախոսների հրատարակչական ակտիվության գործակից /մեկ դասախոսի հաշվարկով/» չափանիշներով առաջատարը համարվում է Պատմության ամբիոնը, իսկ «Ակտիվ/գիտական հրատարակչություն ունեցող/ դասախոսների մասնաբաժինը %» մասով՝ Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը:



Նկար 9 Գիտական հրատարակում ունեցող դասախոսների տոկոսային քանակությունը ամբիոններում

Ընդհանուր առմամբ հոդվածների 61% տպագրված են ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրերում, որոնցից 32%-ը՝ ՎՊՀ տեղեկագրում: Պատմության, հայոց լեզվի և գրականության, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնների հոդվածների 70%-ից ավելին տպագրված են ԲՈԿ-ի ցանկում ընդգրկված ամսագրերում, մնացած հոդվածները տպագրված են միջազգային ամսագրերում կամ գիտաժողովների ժողովածուներում:



Նկար 10. Հոդվածների տոկոսային քանակությունը՝ ըստ տպագրման աղբյուրի

Միջազգային ամսագրերում հոդվածներ են տպագրել օտար լեզվի և գրականության, քիմիայի և կենսաբանության ամբիոնի դասախոսները: Համալսարանում կարևորվում է ազդեցության գործակից ունեցող ամսագրում հոդվածի տպագրված լինելը, նաև այն հանգամանքը՝ ամսագիրը ընդգրկված է Scopus, Web of science շտեմարաններում, թե ոչ: Ամբիոնների աշխատակիցների կողմից տպագրված հոդվածների 14% տպագրված է արտասահմանյան ամսագրերում, բայց ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հոդվածների մեծ մասը տպագրված են ազդեցության գործակից չունեցող ամսագրերում: Միայն 3 դասախոսների հոդվածներ տպագրված են ամսագրերում, որոնք ընդգրկված են Web of science և Scopus շտեմարաններում:

Միջազգային ամսագրերում տպագրված հոդվածների 6% ընդգրկված են Գիտական Մեջբերումների Ռուսական Ինդեքս (Российский индекс научного цитирования РИНЦ) :

2021թ. ՎՊՀ դասախոսների կողմից տպագրվել են 5 մենագրություններ՝

- Թերեզա Շահվերդյան-«Հայոց լեզվի պատմական ձևաբանություն», Երևան 2021թ., 400էջ.
- Սասուն Բաղդասարյան, Աշոտ Խոյեցյան-«Լոռու մարզի լանդշաֆտային պլանավորում և կառավարում», Մեկնարկ ՍՊԸ 2021թ., 228էջ.

- Тадевос Тадевосян-«Очерки о русской литературе 18-20 веков», Ереван Лусакн 2021г.
- Անահիտ Ստեփանյան-«Սոցիալական աշխատանքի տեխնոլոգիաներ», Վանաձոր, «Օրիոն» տպարան, 2021թ.
- Վանդոս Ղարագյոզյան, Հմայակ Ղարագյոզյան-«Աշխարհի և Եվրոպայի առաջնություններ, Քաթարի և Ալեքսանդրի գավաթի մրցումներ և հայ ծանրորդների մասնակցության արդյունքները», Վանաձոր, Արմինֆո 2021թ.

Մենագրությունները երաշխավորվել են ՎՊՀ գիտական խորհրդի կողմից, Մխիթար Գոշ համալսարանի գիտխորհրդի և Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի գիտխորհրդի կողմից:

2021թ. գիտաժողովների մեծ մասը տեղի են ունեցել հեռավար և այդ պատճառով դասախոսները հնարավորություն են ստացել մասնակցել տարբեր միջազգային գիտաժողովների: Գիտաժողովներին մասնակցություն են ունեցել 26 դասախոսներ: Գիտաժողովի մասնակցության արդյունավետությունը հաշվի առնելիս կարևորվում է այն միջազգային է, թե հանրապետական, և ինչպես է հանդես եկել հեղինակը՝ զեկույցով, թե ոչ: Գիտաժողովներին շատ մասնակցություն են ունեցել հայոց լեզվի և գրականության, մանկավարժության և հոգեբանության ամբիոնները համապատասխանաբար 22%:



Նկար 11. Գիտաժողովների մասնակցած դասախոսների տոկոսային քանակությունը՝ ըստ ամբիոնների

Շատ կարևոր է ուսանողների ներգրավումը գիտահետազոտական աշխատանքներում, որը առավել ակտիվ է ուսանողական գիտական ընկերության շրջանակներում:

Աղյուսակ 24. Ուսանողների հետ համատեղ աշխատանքներ

հ/հ	*Ամբիոն*	*Դասախոսական կազմը*	*Ուսանողների հետ համատեղ աշխատանքներ*	*Գիտական հրատարակություններ/ դասախոսներ հարաբերակցությունը*
1	Արվեստի և սպորտի	27	0	0
2	Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման	35	2	6%
3	Հայոց լեզվի և գրականության	23	3	13%
4	Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	29	3	10%
5	Մանկավարժության և հոգեբանության	32	6	22%
6	Պատմության	21	6	29%
7	Քիմիայի և կենսաբանության	32	12	38%
8	Օտար լեզուների և գրականության ամբիոն	33	0	0

Ուսանողների հետ շատ համատեղ աշխատանքներ ունեն քիմիայի և կենսաբանության ամբիոնի դասախոսները, որոնք ինչպես ղեկավարել են ուսանողների մասնակցությունը ուսանողական գիտաժողովներին, այնպես էլ ունեն ուսանողների հետ համատեղ աշխատանքներ, ինչպես ԲՈԿ-ի ցանկում գրանցված ամսագրերում, այնպես էլ միջազգային ամսագրերում:

2021թ. Վանաձորի պետական համալսարանում անցկացվել է ՈԻԳԸ տարեկան գիտական նստաշրջանը: Հոդվածներ են ստացվել Երևանի պետական համալսարանից, Գավառի պետական համալսարանից, Գորիսի պետական համալսարանից, Հայաստանի պետական մանկավարժական համալսարանից: ՈԻԳԸ ժողովածուի մեջ մեկտեղվել են 53 հոդվածներ:



Նկար 12. Ուսանողների հետ համատեղ աշխատանքների տոկոսային քանակությունը՝ ըստ ամբիոնների

2021թ. Վանաձորի պետական համալսարան՝ որպես առաջատար կազմակերպություն ուղարկվել է 6 ատենախոսություն, որոնք տրվել են համապատասխան ամբիոններ, քննարկվել, տրվել դրական եզրակացություն և երաշխավորվել պաշտպանության: Ատենախոսությունները քննարկվել են հայոց լեզվի և գրականության, պատմության, մանկավարժության և հոգեբանության, քիմիայի և կենսաբանության ամբիոններում:

Աղյուսակ 25. Որպես առաջատար կազմակերպություն երաշխավորած ատենախուսություններ

Անուն, Ազգանուն, Հայրանուն	***Ատենախոսության թեմա***	***Դասիչ***	***Մասնագիտություն***
Աշոտ Գալստյան	«Արևելահայ գեղարվեստական վավերագրության լեզուն (19-րդ դ. 60-ական – 21-րդ դ. 10-ական թթ.)»	Ժ.02.01	«Հայոց լեզու»
Անի Գագիկի Մազմանյան	«Որակավորումների ազգային շրջանակի ինքնահավաստումը մասնագիտական կրթության որակի ապահովման շրջանակներում»	ԺԳ.00.01	«Մանկավարժության տեսություն և պատմություն»
Սոսե Սերգեյի Խաչիբաբյան	«Ավազանկարչությունը որպես կրտսեր դպրոցականի ստեղծարարության խթանման միջոց»	ԺԹ.00.03	«Սոցիալական հոգեբանություն»
Միշա Վարուժանի Թադևոսյան	«Կրթության կազմակերպման հիմնախնդիրները ՀՀ քրեակատարողական հիմնարկներում»	ԺԳ 00.01	«Մանկավարժության տեսություն և պատմություն»

Արտակ Եղվարդի Ղազարյան	Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության գործունեությունը Վրաստանում 1918-1920թթ.	Է.00.01	Հայոց պատմություն
Ռուզաննա Գեորգիի Ադամյան	Geraniaceae Juss ընտանիքը Հայաստանում	Գ.00,05	Բուսաբանություն, անկաբանություն, ? էկոլոգիա

Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի, հայոց լեզվի և գրականության, պատմության, քիմիայի և կենսաբանության, մանկավարժության ամբիոնների դասախոսներից հանդիսացել են ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոսներ:

Աղյուսակ 26. Ատենախոսության պաշտոնական ընդդիմախոսներ

Դասախոսի անուն ազգանուն	***Ատենախոսի անուն ազգանուն***	***Թեմա***	***Դասիչ***	***Մասնագիտական խորհուրդ***
Սահակյան Ռուստամ	Цуприков Александр Александрович	«Интеллектуальная система адаптивного управления технологическим процессом бурения нефтегазовых скважин»	05.13.06 Автоматизация и управление Технологическими процессами и производствами (промышленность)	Диссертационный совет при ФГБОУ ВО «Кубанский государственный технологический университет» Д 212.100.04, РФ, Краснодарский край, г. Краснодар
Գևորգյան Պարգև	Ռուզաննա Գուրգենի Ղարիբյան	«Արտակարգ իրավիճակներում անվտանգության մշակույթի ձևավորման տեխնոլոգիաները»	ԺԳ.00.01- Մանկավար-ժության տեսություն և պատմություն	Մանկավար-ժության (058)
Մելիքյան Արթուր	Հենրիկ Ալբերտի Խաչատրյան	Հայաստանի վարչական կառուցվածքը, իրավական կարգավիճակն ու նախարարարկան համակարգը 387-630թթ.	Է.00.01 Հայոց պատմություն	Հայոց պատմության (004)
Վարդանյան Զարուհի	Կարեն Արամայիսի Ղազարյան	Հայաստանի Հանրապետության ռիսկային որոշ տարածքների հողերի վատթարացման էկոլոգիական հետևանքների գնահատումը և բարելավման ուղիները (դոկտորական ատենախոսություն)	Գ.00.05 Բուսաբանություն, սնկաբանություն , էկոլոգիա	Բուսաբանու-թյան (035)

Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման շրջանակներում ֆինանսավորման է արժանացել քիմիայի և կենսաբանության ամբիոնի պրոֆեսոր Զ.Վարդանյանի ներկայացված հայտը՝ «Թանթրվենի սև (Sambucus nigra L.) բուսատեսակի գեներատիվ օրգաններից էկոլոգիապես մաքուր բնամթերքի և բնական ներկի ստացման մեխանիզմների առանձնահատկությունները»: Խմբում ընդգրկված են քիմիայի և կենսաբանության ամբիոնից ևս 3 դասախոսներ:

ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի և հիմնարար հետազոտությունների բելառուսական հանրապետական հիմնադրամի հետ համատեղ անցկացված համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթի դրամաշնորհային ծրագրի անդամ է քիմիայի և կենսաբանության ամբիոնի դասախոս Վարդուհի Հովսեփյանը՝ «Թեմա՝ Ալգինատ-Ag հիդրոզոլների սինթեզը և դրանց հիման վրա նոր հակաբիոտիկների հետ միացության ձևավորում՝ ձկների հիվանդությունների կանխարգելման և բուժման համար»: Աշխատանքը կատարվում է Երևանի պետական համալսարանի «Կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի» ամբիոնում:

Հետազոտական աշխատանքների ֆինանսավորման (Faculty Research Funding) ծրագրին, որն իրականցվում է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի կողմից՝ PMI Science-ի աջակցությամբ, դիմել են ՎՊՀ մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, տեխ. գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ.Սահակյանը (ղեկավար), անդամներ տեխ.գ.թ., դոցենտ Հ.Օհանյանը (անդամ) և մագիստրատուրայի երկրորդ կուրսի ուսանող Ն.Հովհաննիսյանը: Թեմա՝ Անորոշության պայմաններում գտնվող կառավարիչների համար խելամիտ որոշում կայացնող աջակցող համակարգի մշակում (Development of an intelligent decision-making support system (IDMSS) for a manager in the conditions of uncertainty- IDMSS):

Տպագրական աշխատանքներ

Վանաձորի պետական համալսարանի տեղեկագիրը լույս է տեսնում տարին 2 անգամ՝ երկու պրակով: Հոդվածները ընդունվում են տարին երկու անգամ մինչև ապրիլի 15-ը և հոկտեմբերի 15-ը, որից հետո ուղարկվում են գրախոսման:

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի 2021թ. գիտական տեղեկագրի Ա պրակի (հումանիտար և հասարակագիտական գիտություններ, դասավանդման մեթոդիկա) տպագրման համար է հավաքվել է Ա-1 պրակում 35 հոդված, իսկ Ա-2 պրակում՝ 54 հոդված: Ստացված բոլոր հոդվածները ուղարկվել են գրախոսման: Պրակ Ա-1-ում 35 հոդվածներից 9 հոդված գրախոսների կողմից չեն երաշխավորվել տպագրության, իսկ Ա-2 պրակում գրախոսների կողմից մերժվել է 13 հոդված:

Աղյուսակ 27. ՎՊՀ դասախոսների կողմից տրված հոդվածները՝ ըստ ամբիոնների

Ամբիոն	Ա-1	Ա-2
Պատմության	7	7
Հայոց լեզվի և գրականության	1	5
Սպորտի և արվեստի ամբիոն	1	4
Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման	2	4
Օտար լեզուների և գրականության	2	3
Մանկավարժության և հոգեբանության ամբիոն	4	2
Ընդամենը	**17**	**25**

Ա-1 Պրակի համար հոդվածներ ստացվել են՝

- Երևանի պետական համալսարանից,
- Հայկական պետական մանկավարժական համալսարանից,
- ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտից,
- Սլավոնական համալսարանից,
- Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանից,
- Մխիթար Գոշ համալսարանից,
- Վանաձորի դպրոցներից։

Ա-2 Պրակի համար՝

- Երևանի պետական համալսարանից,
- Արցախի պետական համալսարանից,
- Հ Հ ԳԱԱ լեզվի ինստիտուտից,
- ՀՀ ԳԱԱ Գրականության ինստիտուտից,
- ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի, իրավունքի ինստիտուտից,
- Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի կրկնօրինակման բաժնից։

Աղյուսակ 28. Հոդվածների բաշխումը՝ ըստ ոլորտների

Ոլորտ	Պրակ Ա-1	Պրակ Ա-2
Լեզվաբանություն	3	6
Գրականագիտություն	3	5
Փիլիսոփայություն	3	2
Կառավարում, տնտեսագիտություն	3	4
Պատմություն	4	8
Իրավագիտություն և պետական կառավարման խնդիրներ	0	4
Հոգեբանություն. մանկավարժություն և մեթոդիկա	9	12
Լրագրագիտություն	1	0
Ընդամենը	**26**	**41**

2021թ. «Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գիտական տեղեկագիր Բ-1 պրակի (բնական գիտություններ, դասավանդման մեթոդիկա) տպագրման համար ստացվել է 23 հոդված, իսկ Բ-2

պրակի համար ստացվել է 16 հոդված: Բոլոր հոդվածները գրախոսվել են: ՎՊՀ դասախոսներից Բ-1 Պրակի համար ստացվել է 11 հոդված, իսկ Բ-2 պրակի համար՝ 6 հոդված:

Բ-1 Պրակի համար հոդվածներ ստացվել են

- Շիրակի պետական համալսարանից,
- Երևանի պետական համալսարանից,
- Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանից
- Վանաձորի դպրոցներց:

Բ-2 Պրակի համար՝

- ՎՊՀ- «Դիլիջան» ազգային պարկից,
- Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղից,
- Շիրակի պետական համալսարանից,
- Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանից,
- Կոտայքի մարզային դպրոցից,
- Վանաձորի դպրոցներից:

Աղյուսակ 29. Բ Պրակում հոդվածների բաշխումը՝ ըստ ոլորտների

Ոլորտ	Պրակ Բ-1	Պրակ Բ-2
Ֆիզիկա	3	2
Քիմիա	0	1
Մաթեմատիկա	1	3
Կենսաբանություն	5	2
Աշխարհագրություն	1	2
Ինֆորմատիկա	5	3
Մանկավարժություն և մեթոդիկա	2	0
Ընդամենը	**17**	**13**

«ՄԱԳԻՍՏՐՈՍ» ժողովածուին, որը նախատեսված է ուսանողների հետազոտական աշխատանքների տպագրման համար, 2021թ. Հրատարակությունների գրանցման և ինդեքսավորման բաժնի կողմից տրամադրվել է գրանիշ՝ ISSN 2738-2761, գիտխորհրդի կողմից հաստատվել է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի «ՄԱԳԻՍՏՐՈՍ» ժողովածուի հրատարակման կանոնակարգը»: Ձևավորվել է նոր խմբագրական կազմ (հումանիտար, հասարակական և բնագիտական):

5. ՀՈԳԵՎՈՐ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ՎՊՀ Մշակույթի կենտրոնը հավատարիմ է մնացել իր հիմնական նպատակներին՝ աջակցում է համալսարանում գործող մշակույթի կառույցների աշխատանքներին, իրականացնում է միջոցառումների համակարգում, ուսանողության գեղագիտական ճաշակի և մշակութային միջոցառումների որակի բարձրացում, ՎՊՀ ուսանողների ստեղծագործական ունակությունների զարգացման խթանում, տաղանդավոր և շնորհալի ուսանողների հայտնաբերում, համերգների և ներկայացումների կազմակերպում և այլն:

Հաշվետու տարվա ընթացքում անցկացվել են մշակութային թեմաներով դասախոսություն-քննարկումներ, ներկայացումների, գեղարվեստական երկերի դիտումներ և քննարկումներ, որոնք նպատակաուղղվել են ուսանողների գեղագիտական ճաշակի բարելավմանը:

Մշակույթի կենտրոնի խմբակներում ընդգրկված են մոտ 70 շնորհալի ուսանողներ համալսարանի տարբեր ֆակուլտետներից:

2021թ. մշակույթի կենտրոնում սկսել են գործել հետևյալ խմբերը.

1. ՎՊՀ «Բիայնա» երգչախումբ - ղեկավար՝ Սերգեյ Հարությունյան
   - «Գրողների միջազգային օրվան» նվիրված միջոցառում
   - Մոմավառություն՝ նվիրված «Արցախյան 44-օրյա պատերազմում» զոհված հերոսների հիշատակին
   - «Մասնագիտությունների տոնավաճառ»
   - « Զարթոնքը երգով» խորագրով մենահամերգ

2. ՎՊՀ «Ադելաս» պարի խումբ - ղեկավար՝ Մարիամ Լոռեցյան
   - «Հերոս տղերքը մեր» խորագրով միջոցառում
   - «Աշխատանքի տոնավաճառ»
   - «Մագիստրոսների ավարտական միջոցառում»

3. ՎՊՀ թատերախումբ - ղեկավար՝ Էլֆիք Զոհրաբյան
   - «Վիշտը» (ըստ՝ Ա. Չեխովի) ներկայացում

Համալսարանում գործող Մշակույթի կենտրոնը իրականացրել է մի շարք միջոցառումներ.

1. *«Հովհ. Թումանյանի ծննդյան 152-ամյակին» և «Գիրք նվիրելու օրվան» նվիրված միջոցառումների շարք*
2. *«Գրողների միջազգային օրվան» նվիրված միջոցառում*
3. *«Հերոս տղերքը մեր» խորագրով միջոցառում*
4. *«2020-2021 ուսումնական տարվա մագիստրատուրայի շրջանավարտների դիպլոմների հանձման արարողություն»*
5. *«Գիտելիքի օր»*

6. *«44-օրյա պատերազմի զոհերի հիշատակին նվիրված մոմավառություն»*
7. *Բեմականացում՝ ըստ Ա. Չեխովի «Վիշտը» պատմվածքի*
8. *Ուսանողների միջազգային օրվան նվիրված տեսահոլովակների շարք*

6. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

6.1. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ և ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

2021 թ-ից ՎՊՀ-ում մեկնարկել են ԷՐԱԶՄՈՒՍ+(ERASMUS+) երեք նոր նախագծերի շրջանակներում իրականացվող աշխատանքներ: Նախագծերից երկուսը կարողությունների զարգացման նախագծեր են, մեկը՝ Ժան Մոնե գործողություններին վերաբերող նախագիծ:

1. **CONNECT (ERASMUS+)** -Համալսարան-տնտեսություն կապի հաստատումը Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի ուսանողների խելամիտ ձեռներեցային համագործակցության և մրցունակության միջոցով, համակարգող համալսարան՝ Մոլդովայի պետական համալսարան:
2. **SMARTI (ERASMUS+)** -Աջակցություն անգլերենով դասավանդման նորարական մեթոդաբանությանը, մոտեցումներին և գործիքներին՝ կրթության արդյունավետությունը, կայունությունը և միջազգայնացումը բարելավելու նպատակով, համակարգող համալսարան՝ Դրեզդենի տեխնիկական համալսարան
3. **PROMOEU (ERASMUS+, Jean Monnet Project)**-Եվրոպական ուսումնասիրությունների խթանումը Հայաստանում, համակարգող համալսարան՝ Մարիբորի համալսարանի էթնիկ, տարածաշրջանային և հասարակական գիտությունների եվրոպական կենտրոն, Սլովենիա

1. **CONNECT (ERASMUS+)** նախագծի շրջանակներում տարվա ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները.
   - Կազմակերպվել է նախագծի մեկնարկային ժողովը,
   - Մեկնարկել են համապարփակ զեկույցի վերլուծության (ԱՓ2.1) աշխատանքները Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի բուհերում ձեռնարկություն-համալսարան կապի ներկայիս վիճակի գնահատման վերաբերյալ: Մշակվել են աշխատակիցների (42 մասնակից), կազմակերպությունների (21 մասնակից), ուսանողների (112 մասնակից), ստարտափ հիմնադրած ուսանողների (7 մասնակից), շրջանում իրականացված հարցումների արդյունքները: Հարցումների պատասխանները թարգմանվել են անգլերեն և ըստ երկրների վերլուծությունը դեռևս ընթանում է:
   - https://www.heinnovate.eu կայքում լրացվել է Համալսարան-արդյունաբերություն կապի վերաբերյալ հարցումը:
   - Պրոֆեսորադասախոսական կազմի համար անցկացվել են վերապատրաստումներ (ԱՓ2.2) երեք ուղղություններով՝ թվային ուսուցում, աքսելերացիա, բեմական խոսք ու մուլտիմեդիա

հմտություններ։ Դասընթացներին գրանցվել են 51 աշխատակիցներ։ Մասնակիցներին տրվել է հնարավորություն դասընթացին մասնակցելու ասինքրոն (անհամաժանամակյա) ձևաչափով։

- Սմարթ ձեռներեցության կենտրոնի հիմնադրման և սարքավորումների ձեռքբերման նպատակով հայտարարվել է սարքավորումների ձեռքբերման մրցույթ։
- Նախագծի մասին տեղեկատվության տարածման նպատակով ՎՊՀ պաշտոնական կայքում տեղադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն դասընթացների, կազմակերպվող միջոցառումների մասին։ Տեղեկատվությունը տրամադրվել է նաև բոլոր ամբիոններին և այլ ստարաբաժանումներին։ Պատրաստվել է նախագծի տեղեկատվական թերթիկը։
- Կազմակերպվել է այց ՀՀ գործընկեր համալսարաններ (Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան և Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան)։ Այցի նպատակն էր անցկացնել նախագծի հերթական կառավարման ժողովը և իրականացնել այցեր դեպի համալսարաններ և կազմակերպություններ՝ առավել ծանոթանալու ՀՀ ձեռնարկատիրական գործունեությանն ու ՀՀ բուհերի և ձեռնարկատիրական կազմակերպությունների միջև կապին։
- Էրազմուս+ ազգային գրասենյակի աշխատակիցների նախաձեռնությամբ ՎՊՀ-ում անցկացվել է նախագծի մշտադիտարկում, որի ընթացքում ներկայացվել են նախագծի շրջանակներում մինչ այժմ իրականացված աշխատանքները, ինչպես նաև հետագա քայլերը։
- Համալսարանի Ս.Մերգելյանի անվան կենտրոնում տրամադրվել է տարածք ծրագրի աշխատախմբի գործունեության համար։

2. **SMARTI (ERASMUS+)** նախագծի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.
    - Կազմակերպվել է առցանց մեկնարկային ժողով,
    - անցկացվել են կարիքների վերհանման հարցումներ ուսանողների ու դասավանդողների շրջանում,
    - կազմակերպվել են SWOT վերլուծության նպատակով քննարկումներ «Ուսանողակենտրոն ուսուցում» և «Անգլերենը՝ որպես դասավանդման լեզու» թեմաների շրջանակներում,
    - կազմակերպվել է կառավարման ժողով և դասավանդողների վերապատրաստում Գորիսի պետական համալսարանում,
    - նախագծի շրջանակներում ձևավորվել և կահավորվել է լսարան։

3. ***PROMOEU*** **(ERASMUS+ Jean Monnet Project)**- նախագծի շրջանակներում կազմակերպվել է էսսեների մրցույթ, որին մասնակցել են ՎՊՀ-ի 7 ուսանողներ: Հաղթող են ճանաչվել երեք ուսանողներ, որոնք կմասնակցեն նախագծի շրջանակներում կազմակերպվող Եվրոպական ուսումնասիրություններին նվիրված ամառային դպրոցին:

Նախորդ տարիներին մեկնարկած **PRINTEL(ERASMUS+) և ARMDOCT (ERASMUS+)** նախագծերը շարունակել են իրենց աշխատանքները:

1. **PRINTEL(ERASMUS+)** «Փոփոխություն լսարանում. Նորարարական դասավանդման և ուսումնառության օժանդակում՝ Արևելյան գործ-ընկերության երկրներում ուսանողի ուսումնական փորձառության բարելավման նպատակով» նախագծի շրջանակներում փետրվարին 7 դասախոսներ վերապատրաստվել են՝ մասնակցելով Եվրոպական գործընկեր համալսարանների կողմից կազմակերպված առցանց դասընթացներին: Գործընկեր համալսարանների փորձը տարածելու նպատակով վերապատրասված դասախոսներն ապրիլին համալսարանում կազմակերպեցին ներքին դասընթացներ (Արդյունավետ առցանց դասի նախագծում, Հիբրիդային/համակցված դասավանդում և ուսումնառություն, Տեսանյութը որպես հեռավար ուսուցման գործիք արտակարգ իրավիճակներում աշխատող ուսուցիչների համար, Առցանց ակտիվ դասավանդում և ուսուցում՝ փորձառություն տեխնոլոգիաներով, Դասախոսների թվային տեխնոլոգիաների աջակցությամբ ուսումնառության և կոմպետենցիաների շրջանակը), որոնց մասնակցեցին 107 դասախոսներ, ասպիրանտներ, հայցորդներ և ամբիոնի մեթոդիստներ:
Նախագծի շրջանակներում ստեղծվել է վիրտուալ հարթակ (https://vatl.ysu.am/), որտեղ համալսարանի վերապատրաստված 6 դասախոսներ ներդրել են 6 դասընթացներ (Աշխատանքի իրավունք, Հոգեսոմատիկա, Սոցիոլոգիա, տեսական հնչյունաբանություն, գործնական անգլերեն և այլն):

Նախագծի որակի ապահովման շրջանակներում իրականացվել է արտաքին աուդիտ, և Համալսարանի աշխատախումբը դրվատանքի է արժանացել արտաքին փորձագետի կողմից (առկա է փորձագիտական զեկույցը):

2021թ. սեպտեմբերին Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատվել է նախագծի շրջանակներում կազմված ««Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանում նորարարական մեթոդներով դասավանդման և տեսաձայնագրված դասի «գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի կազմակերպման, անցկացման» կարգը, որի նպատակն է նպաստել դասավանդման ընթացքում նորարարական մեթոդների կիրառմանը և կատարելագործմանը, լավագույն փորձի տարածմանը: **PRINTEL** նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը զետեղված է ներքոհիշյալ հարթակներում՝ https://www.printel.am/, https://www.vsu.am/artaqinkaper/erazmusplus/printel, https://www.facebook.com/vanadzor.vph ,https://www.instagram.com/vanadzor_state_university/:

ARMDOCT (ERASMUS+) Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան նախագծի շրջանակներում իրականացվել են հետևյալ հիմնական աշխատանքները.

- Մարտ ամսին կազմակերպվել է եռօրյա աշխատաժողով՝ «Բարձրագույն կրթության երրորդ մակարդակի զարգացման հայեցակարգի և իրավական փաստաթղթերի մշակում» խորագրով: Աշխատաժողովի առաջին օրը ԵՄ գործընկերները ներկայացրել են դոկտորական կրթության միջազգայնացման փորձը Լիտվայի, Իտալիայի, Պորտուգալիայի և Ֆրանսիայի օրինակներով: Ծրագրի անդամները՝ ՀՀ ութ բարձրագույն ուսումնական հաստատությունների և երկու գիտահետազոտական ինստիտուտների ներկայացուցիչներ՝ սահմանակարգային ղեկավարներ և հետազոտողներ, ներկայացրել են ծրագրի ընթացքում իրականացված հետազոտությունները, որոնց հիմքով ձևավորվել են դոկտորական կրթության բարեփոխման առաջարկները և հայեցակարգային լուծումները: Ներկայացված առաջարկները քննարկվել են առանձին աշխատանքային խմբերում՝ հստակեցնելով բարձրագույն կրթության երրորդ մակարդակի զարգացման և որակի ապահովման հայեցակարգի առանցքային դրույթները՝ զալցբուրգյան սկզբունքներին համահունչ:
- Հոկտեմբերին եռօրյա կազմակերպվել է աշխատաժողով՝ «ՀՀ-ում դոկտորական կրթության իրավական կարգավորում» խորագրով, որի ժամանակ քննարկվել են ՀՀ բարձրագույն կրթության երրորդ աստիճանի (ասպիրանտուրա) բարեփոխումների հայեցակարգին, բարձրագույն կրթության երրորդ աստիճանի կրթության կազմակերպման և աստիճանաշնորհման գործընթացի իրականացման ֆինանսական նոր

մեխանիզմներին, գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի աշխատանքի կանոնակարգի վերափոխումներին վերաբերող հարցեր:

Համալսարանում կարևորվում է դասախոսների և ուսանողների շարժունության գործընթացը՝ որպես փորձի փոխանակման և նոր համագործակցության ստեղծման մեծ հնարավորություն: Ուսանողների և դասախոսների շարժունությանը նպաստելու նպատակով հայտեր են ուղարկվել Գրանադայի և Սեվիլիայի համալսարաններ:

Covid-19-ով և Էրազմուս+ առաջին շրջափուլի ավարտով պայմանավորված՝ ՎՊՀ-ի շարժունության ցուցանիշը, համեմատած նախորդ տարիների հետ, իջել է: Տարվա ընթացքում շարժունության տեղեր են հատկացվել հետևյալ գործընկեր համալսարանների կողմից:

1. Գրանադայի համալսարան (Իսպանիա)
2. Տալլինի տեխնոլոգիական համալսարան (Էստոնիա)
3. Ալեքսանդրու Իոան Կուզայի անվան համալսարան (Ռումինիա)
4. Պորտուի համալսարան (Պորտուգալիա)

2021 թվականին 6 ուսանող շարժունության շրջանակներում 1 կիսամյակ տևողությամբ ուսումնառել է Տալլինի տեխնոլոգիական, Գրանադայի և Պորտուի համալսարաններում: 1 ուսանողուհու հաջորդ ուստարում կայանալիք շարժունությունն իրականացնելու համար չի տրամադրվել արտոնագիր ՀՀ-ում Ռումինիայի դեսպանատան կողմից:

Աշխատակիցներից 2021թ. ԷՐԱԶՄՈՒՍ+ շարժունությամբ վերապատրաստում են անցել միայն երկուսը: Եվս երկու վերապատրաստվող և երկու դասավանդող աշխատակիցների շարժունություն հետաձգվել է համավարակի պատճառով և կիրականանա հաջորդ տարվա ընթացքում: 2021թ. վերապատրաստման նպատակով ընտրվել են վարչական երկու աշխատակիցներ, որոնց շարժունությունն իրականացվելու է հաջորդ ուստարում:

2021թվականին դասավանդողների շարժունության և դասավանդողների շարժունության համատեքստում.

- Հունիսին ՎՊՀ-ում հյուրընկալվել է Պորտուի համալսարանի բանասիրական ֆակուլտետի պրոֆեսոր Ֆաթիմա Մարինյոն, ով կարդացել է դասախոսություններ ՎՊՀ-ի հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանողների և դասախոսների համար: Նույն համալսարանից ժամանող մեկ վարչական աշխատակցուհու շարժունություն հետաձգվել է հաջորդ կիսամյակ:
- Որակի ապահովման կենտրոնի ղեկավար Աննա Խաչատրյանը ներգրավվել է COST ծրագրի միջազգային գիտական խմբում, որի հետազոտման թեման է «Հետազոտողների մտավոր առողջությունը»:
- Պորտուի համալսարանի դասախոս Էնջելա Կարվալյոյի առաջարկով ՎՊՀ-ի օտար լեզուների և գրականության ամբիոնի դոցենտ Լ. Վարդանյանը և Գ.

Դոխոլյանը առցանց դասավանդել են գործընկեր համալսարանի մագիստրատուրայի ուսանողներին։

- Միսսիսիպիի Վելեյ պետական համալսարանի կողմից կազմակերպված միջազգային շաբաթին ելույթ են ունեցել «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիրության մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Զառա Ալեքյանը և նույն մասնագիտության բակալավրի 3-րդ կուրսի ուսանողուհի Անահիտ Գրիգորյանը, որոնք ներկայացրել են Հայաստանի մշակույթը, պատմությունը և Վանաձորի պետական համալսարանը։
- Դարմշտադտի ավետարանչական համալսարանի (Գերմանիա) կողմից առաջարկվող առցանց միջազգային գիտաժողովին մասնակցել են 6 աշխատակիցներ (5 դասախոսներ մանկավարժության և հոգեբանության ամբիոնից և միջազգային կապերի մասնագետը) և 3 ուսանողներ։
- Էրազմուսի միջազգային օրվա կապակցությամբ Համալսարանի աշխատակիցները ձեռնամուխ են եղել Էրազմուս+-ի կրթաթոշակակիրների և ուսանողների հետ թեյախմության երեկոյի կազմակերպմանը, որի նպատակն էր ավելացնել ՎՊՀ-ի ուսանողների շրջանում ծրագրի մասին իրազեկությունը, խթանել երկխոսությունը ՎՊՀ շրջանավարտների և ուսանողների միջև և առավել տեսանելի դարձնել բուհը միջազգային ասպարեզում։

Կազմակերպվել են նաև միջազգային և արտաքին կապերին վերաբերող բոլոր միջոցառումներն ու հանդիպումները. DAAD, Նոյմեդ, Ինստիգեյթ, Դասավանդիր Հայաստան, Սոցիալական ձեռներեցների դպրոց, Էրազմուս+ ազգային գրասենյակ։

2021թ. համագործակցության հուշագրեր և պայմանագրեր են կնքվել և վերակնքնվել հետևյալ ուսումնական և ոչ ուսումնական հաստատությունների հետ.

1. Նիժնի Նովգորոդի Ն.Ա. Դոբրոլյուբովի անվան պետական լեզվաբանական համալսարան, ՌԴ (պայմանագիր)
2. Միսսիսիպիի Վելեյ պետական համալսարան, ԱՄՆ (հուշագիր)
3. Շիրակի պետական համալսարան, ՀՀ (պայմանագիր)
4. Մարքեթինգի և սոցիալ-տեղեկատվական տեխնոլոգիաների ակադեմիա, ՌԴ (փոխանակման պայմանագիր)
5. «Նոյմեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ՀՀ (հուշագիր)
6. «Ուսանողական մարզական ֆեդերացիա» ՀԿ, ՀՀ (հուշագիր)
7. Միասնական սոցիալական ծառայության Վանաձորի տարածքային կենտրոն, ՀՀ (հուշագիր),
8. Վոլգոգրադի պետական համալսարան, ՌԴ (երկու պայմանագիր՝ գիտահետազոտական և փոխանակման)։
9. Մոլդովայի պետական տեխնոլոգիական համալսարան (հուշագիր)։

6.1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցություն հանրակրթական հաստատությունների հետ

2021թ. դիմորդների հավաքագրման և հանրակրթական հաստատությունների հետ համագործակցություն իրականացնելու նպատակով (բուհ-դպրոց կապեր) իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Սեպտեմբերի 29-ին Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարանում մասնագիտական կողմնորոշման նպատակով անցկացվել է «Մասնագիտությունների տոնավաճառ» միջոցառումը, որին մասնակցել են Լոռու մարզի թվով 22 դպրոցների 9-12-րդ դասարանների մոտ 300 աշակերտներ:
2. Կազմակերպվել են դպրոցականների առարկայական օլիմպիադաներ ուսումնական 13 առարկաներից՝ կենսաբանություն, քիմիա, ֆիզիկա, մաթեմատիկա, ինֆորմատիկա, հայ գրականություն, հայոց լեզու, ռուսաց լեզու, անգլերեն լեզու, պատմություն, աշխարհագրություն, կերպարվեստ, երաժշտություն: Օլիմպիադաներին մասնակցել են Լոռու մարզի դպրոցների 403 աշակերտներ, այդ թվում 278 աշակերտ՝ հումանիտար հոսքում, 125 աշակերտ՝ բնագիտական հոսքում: Թվով 42 աշակերտներ արժանացել են դիպլոմների, 40-ը՝ շնորհակալագրերի:
3. Անցկացվել է Վ. Տերյանի ծննդյան 135-ամյակին նվիրված ասմունքի մրցույթ՝ Լոռու մարզի դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտների համար: Համավարակի պայմաններում մրցույթն անցկացվել է առցանց, մրցույթին մասնակցել են 57 աշակերտներ:
4. Նոյեմբերի 29-ին անցկացվեց Լոռու մարզի դպրոցականների ասմունքի մրցույթ՝ նվիրված Միսաք Մեծարենցի պոեզիային: Մրցույթին մասնակցեցին Լոռու մարզի դպրոցների և վարժարանների VIII-XII դասարանների թվով 64 աշակերտներ, այդ թվում ք.Վանաձորի թ. 1, 3, 5, 6, 7, 8, 10, 11, 16, 18, 24, 25 դպրոցներից, ՎՊՀ վարժարանից, Ստեփանավան, Սպիտակ, Ալավերդի քաղաքների միջն. և ավագ դպրոցներից, Շահումյան, Լեռնապատ, Դարպաս, Գուգարք, Արջուտ, Բազում, Կուրթան, Գարգառ, Վարդաբլուր, Ճոճկան, Դսեղ գյուղերի միջնակարգ դպրոցներից: Հանձնաժողովի որոշմամբ մրցանակային տեղեր են զբաղեցրել թվով 6 աշակերտներ: Հաղթողները ռեկտորի կողմից պարգևատրվել են դիպլոմներով և շնորհակալագրերով:



Նկար 13. Միսաք Մեծարենցի պոեզիային նվիրված ասմունքի մրցույթի մասնակցության աշխարհագրությունը

5. Անցկացվել է Լոռու մարզի դպրոցականների գեղանկարչական աշխատանքների մրցույթ՝ «Զարթոնք» խորագրով: Մրցույթն անցկացվել է օժտված և շնորհալի դպրոցականներին բացահայտելու և մասնագիտական կողմնորոշման նպատակով: Մրցույթին մասնակցել են թվով VIII-XII դասարանների 30 աշակերտներ Գյուլագարակ, Կուրթան, Շնող, Արջուտ, Բազում, Նոր Խաչակապ գյուղերի, Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի քաղաքների դպրոցներից:
6. Դիմորդների համար կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ, որոնց հայտագրվել են թվով 32 աշակերտներ՝ Վանաձորի թ. 5, 10, 11, 24, Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ ավագ դպրոցներից, ՎՊՀ-ի վարժարանից և քոլեջից, Սպիտակի և Տաշիրի ավագ դպրոցներից: ՎՊՀ–ի առկա ուսուցման համակարգ դիմել են թվով 20 աշակերտներ, ընդունվել են 14-ը, հեռակա համակարգ դիմել են 4-ը, ընդունվել են 2-ը: Դիմորդների և ընդունվածների թվի հարաբերությամբ դասընթացների արդյունավետությունը կազմում է 80%:
7. Կազմակերպվել է «Բաց դռների օր» դպրոցականների համար:
8. Վանաձորի տարածաշրջանի ավագ և հիմնական դպրոցների VIII-XII դասարանների աշակերտների համար 2021թ. մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպվել են դիտարժան փորձերի ցուցադրում ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն առարկաներից: Աշակերտները և ուսուցիչները շրջայց են կատարել ֆիզիկայի, քիմիայի,

կենսաբանության լաբորատորիաներում, ծանոթացել են կահավորմանը, սարքավորումների աշխատանքի սկզբունքին:

9. «ՆորԱրար» կրթական ծրագրերի նախաձեռնության ամառային դպրոցի աշակերտների համար կազմակերպվել է մասնագիտական կողմնորոշման շրջայց համալսարանում: Աշակերտները ծանոթացել են համալսարանի կառուցվածքին, բնական գիտությունների լաբորատորիաներին, գրադարանին, տեղեկություններ են տրամադրվել ՎՊՀ քոլեջի, հենակետային վարժարանի, համալսարանի մասնագիտությունների մասին:
10. Անցկացվել են մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ Վանաձոր, Ստեփանավան, Տաշիր քաղաքների ավագ և միջնակարգ դպրոցներում, Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ դպրոցում, ՎՊՀ վարժարանում:
11. Նոյեմբերից հայտարարվել է Լոռու մարզի հեռավոր դպրոցների բարձր դասարանների աշակերտների ընդունելության քննությունների խորհրդատվությունների անցկացում Zoom հարթակում՝ ամբիոնների մասնագետների կողմից: Առաջին փորձը ցույց տվեց, որ ընդունելության քննությունների փոփոխությունների արդյուքում աշակերտներին հետաքրքրել է խորհրդատվությունների անցկացման ձևը հիմնականում հայոց լեզու առարկայից, շատ հարցեր վերաբերել են ընդունելության երկու միասնական քննություններին վճարովի և անվճար համակարգերում սովորելու համար:

Հասարակության հետ կապեր

Հաշվետու ժամանակաշրջանում Համալսարանի վերաբերյալ տեղեկատվությունը շահառուներին և հանրությանն է ներկայացվել համալսարանի պաշտոնական կայքի, սոցիալական հարթակների, մասնավորապես՝ «Ֆեյսբուքի» և «Ինստագրամի» միջոցով:

ՎՊՀ պաշտոնական ֆեյսբուքյան էջերով տեղադրվում և տարածվում են համալսարանի պաշտոնական կայքում (և ոչ միայն) տեղ գտած բոլոր տեղեկատվական նյութերն ու հայտարարությունները՝ հնարավորություն տալով նաև մեկնաբանել դրանք: Որպես անձնական էջ (профиль) ընկերների ցանկում ընդգրկված է մոտ 5.000 ֆեյսբուքյան օգտատեր: Ընկերների ցանկը պարբերաբար թարմացվում է. պասիվ օգտատերերին փոխարինում են նորերը:

Ֆեյսբուքյան երկրորդ էջը, որ ներկայացված է որպես կազմակերպություն, ունի 10.600 և ավելի ակտիվ հետևորդ, ինչը նպաստում է տեղեկատվության արդյունավետ տարածմանն ու հաշվետվողականության ապահովմանը: Գովազդի տեսանկյունից սա առավել մատչելի և արդյունավետ է՝ համեմատած քաղաքային, մարզային և

հանրապետական ԶԼՄ-ների հետ: Հաշվետու ժամանակահատվածում ֆեյսբուքյան էջերով ապահովվել է նամակագրություն շուրջ 4500 օգտատերերի հետ: Պատասխաններ են տրվել նրանց հետաքրքրող հարցերին, տրամադրվել անհրաժեշտ կարգերի և նյութերի հղումներ:

Նոր՝ ուսումնական տարվա մեկնարկի առթիվ պատրաստվել են գովազդային հոլովակներ, համալսարանի ռեկտորի և դեկանների պաշտոնակատարների շնորհավորական ուղերձներ: Դրանք հրապարակվել են բուհի պաշտոնական կայքում և սոցիալական ցանցերում:

2021թ. կայքում ներդրված արագ արձագանքման առցանց համակարգի միջոցով պատասխանվել է տարբեր բովանդակության 536 նամակի: Այս համակարգը հնարավորություն է տալիս անմիջապես www.vsu.am կայքի համապատասխան էջից ուղղել հարցը: Հարց ու պատասխանը առավել արդյունավետ և արագ կազմակերպելու համար ներդրվել է բջջային հավելված, որը հնարավորություն է տալիս նամակներին պատասխանել նաև ոչ աշխատանքային ժամերին: Համալսարանի հետադարձ կապի բարելավման նպատակով ներդրված բջջային կապը անխափան գործել է: Կայքի հրապարակումները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ էականորեն ավելացել են՝ պայմանավորված համավարակով և ուսումնական գործընթացի առկա կազմակերպմամբ: Դիտողականությունը ևս ավելացել է:

Ֆեյսբուքում տեղադրված վճարովի գովազդի առավելագույն դիտումների քանակը 65.334 է (բակալավրի ընդունելության հայտարարություն):

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՎՊՀ ՈԱԿ-ի գործունեությունը 2021թ. ուղղված էր.

- Որակի ապահովման քաղաքականության վերանայմանը:
- Արտաքին շահակիցների նախընտրությունների ուսումնասիրմանը:
- Ներքին շահակիցների կարիքների վերհանմանը:
- Ներքին շահակիցների ակնկալիքների ուսումնասիրմանը:
- Ներքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրմանը:

Որակի ապահովման քաղաքականության վերանայում

Հաշվետու տարում վերանայվել են որակի ապահովման քաղաքականության հետ կապված հիմնական փաստաթղթերը՝ դրանք համահունչ դարձնելով բուհի 2021-2025թ. ռազմավարությանը:

Արտաքին շահակիցների նախընտրությունների ուսումնասիրում

Բուհի և մասնագիտության նախընտրության ուսումնասիրման նպատակով հաշվետու տարվա ընթացքում հարցում է իրականացվել Վանաձորի, Ալավերդու, Սպիտակի, Գարգառի, Գյուլագարակի, Ագարակի, Տաշիրի ավագ և միջնակարգ դպրոցների 11-րդ դասարանցիների շրջանում: Հարցման մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 824 հոգի:



Նկար 14.Հարցումների վիճակագրությունը

Հարցման արդյունքները վկայում են, որ դիմորդները համալսարան ընտրելիս առավելապես հաշվի են առնում կրթության ընդհանուր որակը (84%), ակնկալում են պահանջված մասնագիտության ձեռքբերում (43%):

Ձեր կարծիքով ինչ առանձնահատկություններ պետք է հաշվի առնել համալսարան ընտրելիս:



Նկար 15. ՝՝Ձեր կարծիքով ինչ առանձնահատկություններ պետք է հաշվի առնել համալսարան ընտրելիս՝՝ հարցի պատասխանի արդյունքները



Նկար.16.՝Առավելապես ինչ կարելի է ակնկալել համալսարանական կրթությունից՝՝ հարցի պատասխանի արդյունքները

Բուհի ընտրության հարցում հարցման պահին կողմնորոշված է եղել հարցվողների 58%-ը, որոնցից 31%-ը հաստատ համոզված է եղել ՎՊՀ-ն նախընտրելու հարցում:



Նկար 17.՞Կողմնորոշվե՞լ եք բուհի ընտրության հարցում՞՞ հարցի պատասխանի արդյունքները



Նկար 18.՞Պատրաստվու՞մ եք դիմել/հնարավո՞ր է դիմեք Վանաձորի պետական համալսարան՞՞ հարցի պատասխանի արդյունքները

Համալսարանի ընտրության հարցում ծնողների խորհրդին են հետևելու հարցվողների 46% -ը: Առաջին հայտով ՎՊՀ դիմելու ցանկություն է հայտնել 40%-ը: Մասնագիտության ընտրության հարցում կողմնորոշված է եղել հարցվողների 31%-ը, հարցին դժվարացել է պատասխանել 34%-ը: Հարցվողների շրջանում ՎՊՀ ցանկալի մասնագիտությունների առաջատարն են «Կառավարում /ըստ ոլորտի/», «Սերվիս» մասնագիտությունները:

Պարբերաբար դիտարկվել են նաև թափուր աշխատատեղերի հայտարարությունների համար նախատեսված հեղինակավոր 10 կայքեր՝ մասնագիտական պահանջարկի ուսումնասիրման նպատակով: Առավել պահանջված մասնագիտությունները վերաբերում են, բնականաբար, ՏՏ ոլորտին: Համակարգվել են

նաև գործատուների՝ հատկապես ընդհանրական կոմպետենցիաների հետ կապված հիմնական պահանջները:

Ներքին շահակիցների կարիքների վերհանում

Հաշվետու ժամանակահատվածում ուսանողների շրջանում իրականացվել են ֆոկուս խմբային քննարկումներ ուսանողներին հուզող խնդիրները վերհանելու նպատակով: Ըստ այդմ առանձնացվել են հետևյալ խնդիրները.

- *Գնահատման օբյեկտիվության խնդիր* - Գնահատման օբյեկտիվության պահանջը համատարած է: Անհրաժեշտ է գնահատման հիմքում ապահովել Բլումի տաքսանոմիան, հստակեցնել պահանջները, գնահատումը կառուցել չափանիշների և չափորոշիչների հենքի վրա՝ ուսումնառության գործընթացն առավել նպատակաուղղված դարձնելու համար: Եթե դասախոսի տեսանկյունից գնահատումը դասավանդում-ուսումնառություն գործընթացի վերջում է ձևավորվում, ապա ուսանողի համար սկիզբն է, և թե «ինչի համար են ուսանողները գնահատվելու ու ինչպես» հարցերի նախնական պարզաբանումը օգնում է ուսանողներին առավել նպատակային սովորել: Հետևաբար, ուսուցման նպատակները պետք է արտահայտվեն գնահատման չափանիշներում:
- *Առարկաների աշխատածավալի խնդիր* - Ուսանողները բարձրաձայնում են միևնույն կրեդիտի պարագայում առարկաների՝ տարբեր չափով ծանրաբեռնվածության վերաբերյալ: Խնդիրը ոչ թե տարբեր առարկաների բարդության աստիճանի մեջ է, այլ աշխատատարության համապատասխանության խնդրի առաջացման մեջ: Առարկաների՝ ըստ հատկացված կրեդիտների աշխատածավալի հստակեցման կարիք կա:
- *ԿԾ-ում առարկաների հերթագայման խնդիր* – Ուսանողների կողմից բարձրացվել է նաև առարկաների հերթագայման խնդիրը: Կա պահանջ ապահովելու պարզից բարդի անցումը, ինչպես նաև բացառելու առարկաների բովանդակային համընկնումները:
- *Մասնագիտական ժամանակակից գրականությամբ ապահովման խնդիր* – Ուսանողը շեշտում է մայրենի լեզվով մասնագիտական գրականության բացակայության փաստը: Փաստենք, սակայն, որ ժամանակակից աշխարհում մասնագիտական օտարալեզու գրականության անտեսումը մասնագիտանալու ճանապարհին ոչ լրիվություն է խոստանում: Մայրենի լեզվով մասնագիտական գրականության կարիքը ընկալելի է, սակայն ժամանակակից աշխարհում այլևս դառնում է անհասկանալի և հապաղման էֆեկտ է առաջացնում: Հետևաբար, օտարալեզու մասնագիտական գրականության ուսումնասիրումը պետք է դառնա պահանջ՝ նախապես ապահովելով ուսանողների՝ օտար լեզվի իմացության առավել բարձր մակարդակ:

- *Դասացուցակի համաչափության խնդիր* – Ուսանողները բազմիցս բարձրացրել են դասացուցակների համաչափության խնդիրը՝ ըստ տեսական-գործնական հարաբերակցության, կիսամյակի սկիզբ և ավարտ տարբերության: Օրվա կտրվածքով դասախոսությունների կամ գործնականների կուտակումը արհեստականորեն դժվարացնում է ուսումնառությունը: Մեկ այլ խնդիր է կոնկրետ առարկայի պարագայում սեմինար/գործնական/լաբորատոր և դասախոսության ժամերի բաշխումը: Հաճախ գործնական պարապմունքները կիսամյակի վերջին մոտ ավելի շուտ են ավարտվում, քան դասախոսությունները, ինչը առարկայի նկատմամբ հետաքրքրության նվազման է հանգեցնում հատկապես ստուգարքային առարկաների պարագայում:
- *Դասավանդման ակտիվ մեթոդների կիրառման, ճկուն հմտությունների զարգացման խնդիր* – Այլևս փաստ է, որ աշխատաշուկայում գործատուի պահանջները կառուցվում են ոչ միայն մասնագիտական գիտելիքների և հմտությունների, այլ նաև ոչ մասնագիտական, ընդհանրական, այսպես կոչված ճկուն հմտությունների շուրջ, որոնք հիմնականում քանակապես գերազանցում են մասնագիտականին: Դասավանդման առավել ակտիվ անհատական և խմբային ձևերը իրենց երկրորդային էֆեկտն ունեն հենց նման հմտությունների զարգացման գործում: Պատահական չէ, որ ներկայիս կրթական գործընթացում դրանց ներդրումը առավել ընդգծված է: Գործատուի հնարավոր պահանջներից ելնելով՝ առաջանում է ոչ մասնագիտական հմտությունների զարգացման առավել ընդգծված կարիք: Կոնկրետ մեթոդների նպատակային ընտրությունը և կիրառումը կնպաստի այդ բացի լրացմանը:

Խնդիրների ճանաչման նպատակով ֆոկուս խմբային քննարկումներ են իրականացվել նաև դասախոսների շրջանում: Առանձնացված հիմնական խնդիրներն են՝

- *Մասնագիտական օտար լեզուների դասավանդման պարագայում հոսքային մոտեցման խնդիր -* Ֆինանսական արդյունավետության տեսանկյունից հոսքերի կազմման միտումը ընկալելի է, սակայն մասնագիտական օտար լեզուների դասավանդման պարագայում առաջանում է խնդիր, քանի որ մեկից ավելի մասնագիտությունների տեսանկյունից օտար լեզվի միաժամանակյա դասավանդումը ինքնին բարդություն է դասախոսների համար:
- *Ուսանողների շրջանում սովորելու մոտիվացիայի խնդիր* – Դասախոսների կողմից նման խնդրի բարձրացումը տարբեր հիմնավորումներ է գտնում՝ աշխատաշուկայի պահանջարկից սկսած մինչև ընդունելության քննությունների՝ միջինում ցածր միավորներ և շեմի բացակայություն: Դասախոսները, նման խնդրի հետ բախվելով, երբեմն ստիպված են դասընթացը բովանդակային տեսանկյունից հարմարեցնել ուսանողներին, փոփոխել մեթոդները:

- *Աշխատանքի և ուսումնառության համատեղման խնդիր* – Եթե աշխատանքային զբաղվածությունը հեռակա համակարգի ուսանողների շրջանում էր տարածված, ապա վերջին տարիներին նկատելիորեն աճում է աշխատող ուսանողների քանակը նաև առկա համակարգում, ընդ որում աշխատանքային պրոցեսում արդեն ակտիվ են ոչ միայն արական սեռի ուսանողները, այլ նաև՝ իգական, հնարավորության դեպքում ձգտում են աշխատել ոչ միայն մագիստրատուրայի ուսանողները, այլ նաև բակալավրական կրթության 4-րդ և 3-րդ կուրսերի ուսանողները: Սովորելուն զուգահեռ աշխատաշուկայում ներգրավվածությունը անընդհատ աճի միտում ունի, ինչը պայմանավորված է ներկա և գալիք երիտասարդ սերդի ֆինանսական անկախության ձգտումով: Աշխատելու կարիքը արդեն իսկ ակնհայտ է, և այդ ֆոնին առաջանում է անհատական ուսումնառության մեխանիզմների զարգացման խնդիր:
- *Ժամանակի խնդիր* - Դասախոսի ծանրաբեռնվածությունը ժամանակային առումով երբեմն խանգարում է գիտահետազոտական աշխատանքով զբաղվելուն:
- *Դասախոսների մասնագիտական վերապատրաստման խնդիր* – Դասախոսներն էապես շեշտում են մասնագիտական վերապատրաստման անհրաժեշտությունը:
- *Դասալսումների խնդիր* – Վերջին երկու տարվա ընթացքում ամբիոնների կողմից դասալսումներ հիմնականում չեն կազմակերպվում, ինչը ամբիոնների վերակազմավորումից հետո առաջացած խնդիր է: Առաջարկվում է ամբիոնների ներսում ստեղծել մասնագիտական խմբեր կամ սեկցիաներ, որոնք պատասխանատու կլինեն դասալսումներ կազմակերպելու և ամբիոնի ներսում դասավանդման խնդիրների առնչությամբ փոխօգնություն կազմակերպելու համար:

Ներքին շահակիցների ակնկալիքների ուսումնասիրություն

Ինչպես վկայում են ուսանողության շրջանում իրականացված հարցումները՝ ՎՊՀ-ն նախընտրելիս հարցվողների մեծամասնությունը դիմել է որակյալ կրթություն ստանալու (79,7%), ապա պահանջված մասնագետ դառնալու (63,5%), ուսանողական հետաքրքիր կյանք ունենալու ակնկալիքով (40,5%):



Նկար 19. ՝՝ՎՊՀ նախընտելու պատճառները՝՝ հարցի պատասխանի արդյունքները

Մասնագիտության ընտրության պարագայում կարևորվել է մասնագիտության հանդեպ սերը (74,3%), ոլորտով հետաքրքրվածությունը (65,7%), հետագայում աշխատանք գտնելու հավանականությունը (54,3%):



Նկար 20.՝՝Մասնագիտության ընտրության պատճառները՝՝ հարցի պատասխանի արդյունքները

Մասնագիտական առաջընթացի հարցում ուսանողներն առավելապես կարևորել են հետազոտական և պրակտիկ փորձի ձեռքբերումը, իրենց ընտրած ոլորտի նեղ մասնագետների հետ շփումը, բուհում ինքնակատարելագործվելու հնարավորությունը: Հարցվողների 60%-ը կրթական միջավայրից ակնկալում է անկաշկանդ և անմիջական շփում դասախոսների հետ, հարգանք բազմակարծության նկատմամբ (54,3%), արտալսարանային գործունեություն՝ մասնագիտական քննարկումների կազմակերպման միջոցով(48,6%):



Նկար 21. ՛՛Կրթական միջավայրից ակնկալիքները՛՛ հարցի պատասխանի արդյունքները

Չորրորդ կուրսի և մագիստրատուրայի ուսանողների ակնկալիքների շարքում առավելապես ընգծվել է ստացված գիտելիքների կիրառելիությունն ու պիտանելիությունը, պրակտիկ փորձի ձեռքբերումը, գիտաժողովներին մասնակցելու, դասախոսների հետ համատեղ հոդվածներ գրելու հնարավորությունը:

Որպես բուհի հիմնական առավելություններ, ուսանողների կողմից նշվել են դասախոսական որակյալ կազմը, հետաքրքիր դասապրոցեսի կազմակերպումը:

Դասախոսների շրջանում իրականացված հարցումների արդյունքները վկայում են (*Գնահատումը իրականացվել է 5 միավորանոց սանդղակով:*), որ դասախոսները ուսանողներից հիմնականում ակնկալում են դասապրոցեսով հետաքրքրվածություն(4,5), պատասխանատվություն(4,1), աշխատասիրություն(4), հենքային գիտելիքների համապատասխանություն բուհական կրթության պահանջներին(4):

Աղյուսակ 30.Հարցման արդյունքները

Ձեր ակնկալիքներն ուսանողներից	Միջին
Դասապրոցեսով հետաքրքրվածություն	4,5
Պատասխանատվություն	4,1
Աշխատասիրություն	4
Հենքային գիտելիքների համապատասխանություն	4
Հետազոտական աշխատանքներում ակտիվ ներգրավվածություն	3,6
Նախաձեռնողականություն	3,7

Աշխատանքային գործունեության ընթացքում առավելապես կարևորում են կոլեկտիվում փոխօգնության պատրաստակամությունը(4,3), բուհում կայացված որոշումների վերաբերյալ իրազեկվածությունը(4,2), ոլորտի մասնագետների հետ գիտահետազոտական աշխատանք իրականացնելու հնարավորությունը(4): Դասախոսական գործունեության պարագայում հիմնականում շեշտվել է

մասնագիտական վերապատրաստումների կարևորությունը(4), փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորությունը (3,6):

Աղյուսակ 31, Հարցման արդյունքները

Ի՞նչն եք առավելապես կարևորում աշխատանքային գործունեության ընթացքում:	Միջին
Կոլեկտիվում փոխօգնության պատրաստակամություն	4,3
Բուհում կայացված որոշումների վերաբերյալ իրազեկվածություն	4,2
Ոլորտի մասնագետների հետ գիտահետազոտական աշխատանք իրականացնելու հնարավորություն	4
Մասնագիտական վերապատրաստումներ	4
Փոխանակման ծրագրերին մասնակցելու հնարավորություն	3,6

Ներքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրություն

Ուսանողության շրջանում բավարարվածության ուսումնասիրության արդյունքները ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ մագիստրատուրայի ուսանողները համեմատաբար բարձր են գնահատել թեզի գնահատման օբյեկտիվությունը(4), մասնագիտական առարկաների շրջանակներում տրվող գիտելիքների արդիականությունը(3,9), բուհի կողմից թեզի նախապատրաստման աջակցությունը(3,8), բուհի կողմից հետազոտական աշխատանքների մեթոդական աջակցությունը(3,8): Մագիստրոսները բարձր են գնահատում իրենց ինքնուրույնությունն ու պատասխանատվությունը(4,5): Մասնագիտական օտար լեզվի տիրապետումը միջինում գնահատել են 3,8, պրակտիկ փորձի առկայությունը՝ 3,9: Համեմատաբար ցածր են գնահատել բուհի կողմից աշխատաշուկայի վերաբերյալ խորհրդատվությունների տրամադրման հնարավորությունը(2,5), բուհի կողմից ուսանողի և գործատուի միջև կապի ստեղծման աջակցությունը(2,7) բուհի կողմից ուսանողի՝ աշխատաշուկայի վերաբերյալ իրազեկվածության բարձրացումը(2,8): Ուսանող-գործատու կապի ստեղծման խնդիրը ընդգծված է: Չորրորդ կուրսի ուսանողները առավել բարձր են գնահատել ավարտաճառի ղեկավարումը (3,8), ավարտաճառի գնահատման օբյեկտիվությունը(3,6), ավարտաճառի ազդեցությունը մասնագիտական աճի վրա(3,3), բուհի կողմից ավարտաճառի նախապատրաստման աջակցությունը(3,3): Համեմատաբար ցածր են գնահատել կրկին բուհի կողմից ուսանողի և գործատուի միջև կապի ստեղծման աջակցությունը(2,2) և ըստ կիսամյակների առարկաների բաշխման համաչափությունը (2,2): Երկրորդ և երրորդ կուրսերի ուսանողները հիմնականում բարձր են գնահատել ուսուցանվող առարկաների հագեցած բովանդակությունը(3,6), դասախոսի մասնագիտական պատրաստվածությունը(3,8), առավել ցածր են գնահատել ինքնուրույն աշխատանքների շրջանակներում հետազոտական աշխատանքների կազմակերպումը (2,7): Առաջին կուրսեցիները առավել բարձր են գնահատել ուսանող-դասախոս համագործակցության որակը (3,7), կրթական ծրագրերի

ուսումնամեթոդական ապահովվածությունը (3,6): Ընդհանուր առմամբ ուսանողները առավել բարձր են գնահատել գրադարանի սպասարկումը և առավել ցածր են գնահատել լաբորատորիաների՝ ժամանակակից նյութատեխնիկական հագեցվածությունը:

Դասախոսների շրջանում իրականացված հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դասախոսները հիմնականում գոհ են ուսանողների կարգապահությունից(3,9) և համագործակցելու պատրաստակամությունից(3,7): Դասախոսները առավել ցածր են գնահատել ուսանողների կողմից օտարալեզու գրականություն ուսումնասիրելու կարողությունը (2,3): Աշխատանքային գործունեության ընթացքում առավել բարձր է գնահատվել ծանրաբեռնվածությունների կազմման թափանցիկությունը՝ 3,8: Առավել ցածր է գնահատվել ընդմիջման համար անհրաժեշտ պայմանների առկայությունը(2,5) և աշխատավարձի չափը(2,4):

Աղյուսակ 32, Հարցման արդյունքները

Որքանո՞վ եք գոհ՝	Միջին
Ուսանողների կարգապահությունից	3,9
Ուսանողների՝ համագործակցելու պատրաստակամությունից	3,7
Օտարալեզու գրականություն ուսումնասիրելու կարողությունից	2,3
Ծանրաբեռնվածությունների կազմման թափանցիկությունից	3,8
Ընդմիջման պայմաններից	2,5
Աշխատավարձի չափից	2,4

Հիմք ընդունելով փորձագիտական կարծիքի դիտարկումները՝ բարելավման պլանի շրջանակներում կառավարման և վարչարարության տեսանկյունից շեշտադրվել են բուհի ռազմավարական կառավարման սկզբունքներին համապատասխան կազմակերպական կառուցվածքի բարեփոխումների իրականացումը, բուհի կառավարման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությունը խրախուսող մեխանիզմների ներդրումը, էթիկայի կանոնագրքի բարելավումը, բուհի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության մեխանիզմների ներդրումը, ԳԱՑ-ի լրամշակումը, կառավարման գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և դրանց կիրառումը գնահատող արդյունավետ կառուցակարգերի մշակումը և ներդրումը, բուհի տարբեր գործընթացների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման համակարգերի ներդրումը, բուհի ֆինանսական կառավարման համակարգի բարելավումը՝ հարմարեցնելով պլանավորվող ռազմավարական առաջնահերթություններին,

մարդկային ռեսուրսների կառավարման ամբողջական քաղաքականության ներդրումը: Մասնագիտական կրթական ծրագրերի, ուսանողության և պ/դ կազմի տեսանկյունից կարևորվել են կրթական ծրագրերի արտաքին գնահատման հնարավորությունը, դասավանդման ուսանողակենտրոն ուսուցման կատարելագործումը, դասավանդման մեթոդների արդիականացումը, գնահատման օբյեկտիվության բարձրացումը, շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունների և արդյունավետ մեխանիզմների մշակումը եւ ներդրումը, ուսանողական խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացումը, ուսանողների՝ հետազոտական աշխատանքներին մասնակցությունը խրախուսող մեխանիզմները, պ/դ կազմի կատարելագործմանն ուղղված մասնագիտական վերապատրաստումների կազմակերպմանը աջակցությունը, պ/դ կազմի գիտահետազոտական աշխատանքներում ներգրավվելու խրախուսման մեխանիզմները, պ/դ կազմի մասնագիտական և մանկավարժական կարողություններին ներկայացվող հստակ պահանջները, բուհի հետազոտական ուղղությունների հստակեցումը, հետազոտությունների որակի գնահատումը, հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների բարելավումը: Ենթակառուցվածքի և ռեսուրսների տեսանկյունից ընդգծվել են տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության, արդյունավետության գնահատումը, ֆինանսական արտաքին աղբյուրների բազմազանության ապահովումը, գրադարանային ենթակառուցվածքների բարելավումը, ՏՏ ծառայությունների զարգացումը: Որակի ներքին ապահովման համակարգի առումով շեշտադրվել է տեղեկատվության հավաքագրման և վերլուծության գործընթացների բարելավումը, որակի ապահովման համակարգի գործունեության մշտադիտարկման և վերլուծության մեխանիզմների մշակումը, ՈԱ պատասխանատուների մասնագիտական զարգացման շարունակականությունը:

Ընտրական համակարգերի միջազգային հաստատության միջնորդությամբ(IFES) և ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության օժանդակությամբ(USAID) 2021 թվականի մարտից ՎՊՀ-ում մեկնարկել էր քաղաքացիական կրթության «Ներգրավված քաղաքացի» լրացական դասընթացը: Դասընթացի պիլոտային փուլին մասնակցել են 10 ուսանող, հանդես են եկել քաղաքացիական նախաձեռնությամբ համայնքային խնդիրների հետազոտման նպատակով: 2022 թվականի մարտ ամսին նախատեսվում է դասընթացի նոր մեկնարկ:

8. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

8.1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՎՊՀ հենակետային վարժարան 2021-2022 ուսումնական տարում ընդունվել են 152 աշակերտներ: Ներկայումս վարժարանն ունի 432 աշակերտ: Զգալի աշխատանքներ են տարվել վարժարանում ուսուցման որակի բարձրացման ուղղությամբ: Այս գործին էականորեն նպաստել է այն հանգամանքը, բացառությամբ մինչև մեկ տարվա աշխատանքային ստաժ ունեցող ուսուցիչների, որ բոլորն անցել են ատեստացիա, 12 ուսուցիչ՝ երկրորդ անգամ: Ներկայումս վարժարանի ութ ուսուցիչներ ունեն ուսուցչի որակավորման առաջին տարակարգ: Տարակարգ ստանալու գործընթացը կրում է շարունակական բնույթ, ատեստացիա անցած մի շարք ուսուցիչներ պատրաստվում են ներկայացնել ուսուցչի որակավորման առաջին տարակարգի համար անհրաժեշտ փաստաթղթեր:

2021թ. հենակետային վարժարանում աշխատում են գիտության 4 թեկնածուներ:

Ուսուցման որակի բարձրացման նպատակով շարունակվում է համագործակցությունը համալսարանի ամբիոնների հետ: Վարժարանը հագեցած է բնագիտական առարկաների լաբորատորիաներով և համակարգչային լսարանով: Այս ուսումնական տարում վարժարաում կատարվել են մեծածավալ շինարարական աշխատանքներ, մասնավորապես վերանորոգվել է ցանկապատը, փոխվել են հին լուսամուտները:: Ավելացվել է ևս մեկ պրոեկտորով լսարան: Վարժարանում գործում է «Արմատ» ռոբոտաշինական լաբորատորիա:

2021թ. վարժարանի աշակերտները մասնակցել են առարկայական օլիմպիադաների քաղաքային փուլին, որոնցից 18-ն անցել են մարզային փուլ: Մարզային փուլը հաղթահարած աշակերտներից 4-ն անցել են հանրապետական փուլ: Նրանցից երեքը գրավել են մրցանակային տեղ, իսկ մեկն արժանացել է գովասանագրի: Վարժարանի հարյուրից ավելի աշակերտներ ակտիվորեն մասնակցել են ՎՊՀ-ում և Վանաձորում կազմակերպված օլիմպիադաների, ասմունքի մրցույթին: Մեր աշակերտները ակտիվորեն մասնակցել են «ԱՅԲ» հիմնադրամի կազմակերպած «Մեղու», «Կենգուրու» և «Ռուսական արջուկ» մրցույթներին և նվաճել տարբեր մրցանակներ:

Վարժարանի 144 շրջանավարտներից 123-ն ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Վարժարանում գործում է «Բանավեճի ակումբ», որը ակտիվ մասնակցություն է ունենում քաղաքային և մարզային մրցումներին:

Վարժարանում կազմակերպվել են մեդիագրագիտության դասեր և հակակոռուպցիոն դաստիարակությանը նվիրված միջոցառում:

Հետևողական աշխատանքներ ենք կատարում ռազմա-հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ, մասնակցում ենք ՊՄՏՀԿ-ի (ԴՕՍԱԱՖ) կազմակերպած բոլոր մրցումներին:

Վարժարանի մասնաշենքում կատարվել են կրթական միջավայրի բարելավման աշխատանքներ /տես վերևում՝ «Ենթակառուցվածքների կառավարում»/:

8.2. ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ. ՔՈԼԵՋ

ՎՊՀ քոլեջում հաշվետու տարվա ընթացքում առկա ուսուցմամբ կատարվել է ընդունելություն՝ 4 կրթական ծրագրով.

- «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» (9-ամյա կրթության հիմքով, 4 տարի տևողությամբ),
- «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» (9-ամյա կրթության հիմքով, 4 տարի տևողությամբ),
- «Հաշվապահական հաշվառում» (9-ամյա կրթության հիմքով, 3 տարի տևողությամբ),
- «Սպասարկման կազմակերպում» (12-ամյա կրթության հիմքով, 2 տարի տևողությամբ):

Ձեռք է բերվել «Նախադպրոցական կրթություն» մասնագիտության լիցենզիա:

Քոլեջ ընդունվել է թվով 68 ուսանող, որից 60 ուսանող՝ 9-ամյա կրթության հիմքով, իսկ 12-ամյա կրթության հիմքով՝ 8 ուսանող:

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտել են 40 ուսանող, որոնցից գերազանցության դիպլոմ է ստացել «Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության 3 շրջանավարտ, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 2 շրջանավարտ: Շրջանավարտներից ԲՈՒՀ-ի 2-րդ կուրսում կրթությունը շարունակում են «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության 2 շրջանավարտ՝ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության երկրորդ կուրսում, «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության 3 շրջանավարտ՝ «Կառավարում» մասնագիտությամբ: Շրջանավարտներից ՎՊՀ 1-ին կուրս են ընդունվել 9 շրջանավարտ, 3 շրջանավարտ ընդունվել է ԵՊՀ:

«Գործավարություն՝ օտար լեզվի խորացված իմացությամբ» մասնագիտության 3 շրջանավարտ աշխատում են տարբեր կազմակերպություններում որպես օպերատոր-գործավար, «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում» մասնագիտության 3 շրջանավարտ աշխատում են օպերատոր:



Նկար 22. Ուսանողների թվաքանակը

Քոլեջի 212 ուսանողներից 70-ը սովորում են վճարովի համակարգում, իսկ 142-ը՝ անվճար համակարգում: Անվճար սովորող ուսանողներից 79-ը ստանում են կրթաթոշակ:



Նկար 23 . Քոլեջի անվճար սովորող ուսանողների թվաքանակը

Քոլեջի բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները ստանում են կրթաթոշակ, որն ամեն տարի որոշում է կառավարությունը:



Նկար 24 .Քոլեջի կրթաթաշակ ստացող ուսանողների թվաքանակը .



Նկար25. Քոլեջի շրջանավարտների թվաքանակը



Նկար 26. Գործատուների հետ կնքված պայմանագրերը

Ուսումնական պրակտիկաները հիմնականում կազմակերպվում են քոլեջում: Արտադրական պրակտիկաները կազմակերպվում են Վանաձորի համայնքապետարանում, Նոտարական գրասենյակում, Ամերիկայի դեսպանատան՝ Վանաձորում գտնվող «Ամերիկյան անկյունում», «Կիրովական» հյուրանոցում, «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնում, «Արկատ» ՍՊԸ-ում, Դեբետի «Սմարթ» կենտրոնում, «Ինստիգեյթ մոբայլ» կենտրոնում, «Օազիս» ՍՊԸ-ում, «ԶԵԹ ՄԻՔՍ» ընկերությունում: Ձեռք են բերվել նոր փոխհամաձայնության հուշագրեր և պայմանագրեր «Ամուր Նեթ», «Մայ-Նեթ», «Սիլ ինշուրանս», Վանաձորի թիվ 2, 19, 30 մանկապարտեզների հետ:

Շահառուների կարիքների վերհանման նպատակով պարբերաբար կազմակերպվել են գործատուների, շրջանավարտների, ծնողների հետ հանդիպումներ՝ կարիերայի կենտրոնի օգնությամբ: Հաճախակի իրականացվել են հեռավար և առկա հանդիպումներ ուսանողների և շրջանավարտների հետ:

Ուսանողները ակտիվ մասնակցություն ունեն նաև քոլեջի հասարակական և մշակութային կյանքում:

Ուսանողական խորհրդի օգնությամբ կազմակերպվել է շաբաթօրյակ՝ մաքրելով քաղաքի առանձին պուրակներ և Տանձուտ գետը: «Էկո» խմբակի անդամները ակտիվ մասնակցություն են ունեցել Վանաձորում անցկացվող մաքրման աշխատանքներին:

Մի շարք շնորհալի ուսանողներ մասնակցել են «Իմ 2020 թվականի ամառային արձակուրդը» թեմայով անգլերենով անցկացվող միջազգային շարադրության մրցույթին և ստացել են հավաստագրեր: Չնայած համաճարակային իրավիճակին, ուսանողները նաև մասնակցել են մի շարք հետաքրքիր և ուսուցողական ծրագրերի, որոնցից է «Համայնքը ես եմ» ծրագրի շրջանակներում իրականացված ձմեռային առցանց քառօրյա դպրոցը: Հեռավար կապ ենք հաստատել Ստավրապոլի մարզի Ստարոմարևկայի դպրոցի հետ:

Լոռու տարածաշրջանային քոլեջում մասնակցել են աշխատաժողով-դասընթացի՝ ՄԿՈ հաստատությունների կառավարման խորհուրդների և ուսանողական խորհուրդների վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում փոփոխված կրթական չափորոշիչների հիման վրա վերանայվել են ուսումնական պլանները, առարկայական ծրագրերը, մոդուլների ուսումնառության պլանները, ուսումնառության նյութերը, կատարման չափանիշները, գնահատման մեթոդները:

Քոլեջում կատարվել են կրթական միջավայրի բարելավման աշխատանքներ /տե՛ս վերևում՝ «Ենթակառուցվածքների կառավարում»/: